№ 24 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2 — 1906 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2 № 24

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Միրզա Պարոնեանը ցաւօք սրտի խնդրում է իր բոլոր բարեկամներին ու ազգականներին բարեհաճել ներկայ լինել Շուշուց Գորիս գնալիս Թուրքերի ձեռքով սպանված իր եղբօր՝

ՂՈՒԿԱՍ ԲԷԳ ՊԱՐՈՆԵԱՆՑԻ

հոգեհանգստին, որ կը կայանայ Ռաշտի (Պարսկաստան) ս. Մեսրովպ եկեղեցում:

Բարսեղ քահանայ Տէր-Բարսեղեան, Նունեա Հայրապետեան, Մանեա, Երուանդ և Արմենակ Տէր-Բարսեղեանցները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը՝ իր երախտաւոր զոքանչի, երկրորդը՝ իր թանգագին մօր, իսկ վերջինները՝ իրանց սիրելի մեծ մօր՝

ՀՌԻՓՍԻՄԷ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ յունվարի 30-ին, առաւօտեան ժամը 9-ին: Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ սեփական տնից՝ (7-րդ քաղաքամաս, Բալաջարսկայա փողոց, № 23) դէպի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցին, հինգշաբթի, ամսիս 2-ին, առաւօտեան 10 ժամին:

Արական երրորդ գիմնազիայի տեսուչը

հրաւիրում է ծնողներից ընտրված պատգամաւորներին շնորհ բերել նոյն գիմնազիան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, փետրվարի 2-ին, հինգշաբթի, երեկոյեան ժամը 6-ին, խորհրդի անդամներ ընտրելու: 1—1

ՍՐԱՆՈՎ յայտարարում ենք, որ երեկվանից մենք հայ փռնապաններս հացի գինը պակասացրել ենք $^1/_2$ կոպ. այսինքն II-րդ տեսակը փոխանակ 5 կոպ. 4$^1/_2$ կոպ., III-րդ տեսակը, փոխանակ 4 կոպ. 3$^1/_2$ կոպ.: Միքայելեան փող. Վորոնցովի արձանի դիմաց:

1—2 Յարութիւն Զալախեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երբ կը լինի վերջը: Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Սենատոր Կուզմինսկու տեղեկագրից. Բագուի մահմեդականների կեանքից. Ղարաբաղցիների ժողովը. Նամակ Երևանից. Նամակ Նուխուց. Դարձեալ եկ. նորոգման և ֆեդերացիայի խնդիրը. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պիոս X պապը, Սապպաղեան կաթողիկոսը և Օրմանեան պատրիարքը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԵՐԲ ԿԸ ԼԻՆԻ ՎԵՐՋԸ

I

Ղազախի գաւառի Կըրզան գիւղի բնակիչներից դարձեալ երեք հոգի եկան Թիֆլիս:

Նրանք, ազատվելով գերութիւնից, շտապել էին մեզ մօտ՝ յայտնելու, որ վտանգ է սպառնում իրանց այն համագիւղացիներին, որոնք գտնվում են Թուրքերի մօտ:

—Ազատեցէք նրանց, որքան կարելի է շուտ, աղերսում էին նրանք: Չափազանց վտանգաւոր է դարձել դրութիւնը այժմ:

—Քանի հոգի՞ են մնացել գերութեան մէջ, հարցրինք մենք:

—Մեր գալուց յետոյ 111 հոգի:

—Այստեղ կարծում էին թէ մնացել են 108 հոգի:

—Ոչ, սխալ է եղել, այնտեղ 114 հոգի էին մնացել, մենք երեքս եկանք, այնտեղ մնացին 111 անձ:

Այդ երեքին հասցրել են մինչև կայարան Թուրքերը, գաղտնի միւս Թուրքերից:

Եկողները պատմեցին, որ նրանք փոքր ի շատէ իրանց ապահով էին զգում Թուրքերի մօտ, բայց վերջին 5—10 օրերում Թուրք ռազմիկ խմբերը սկսել էին խուզարկել գիւղերը և հարց ու փորձ էին անում թաքնված հայերի մասին: Նրանք պահանջում էին որ հայերին յանձնեն իրանց: Սակայն Թուրք հովանաւորողները չէին տալիս ոչ ոքի:

—Ամբողջ ամիսներ թաքուն ապրել ենք, պատմում էին կըրզանցիները, յաճախ խոտի մէջ թաղված, հորերի մէջ կուչ եկած: Կարգին արևի երես չենք տեսել: Մենք սպասում էինք պրիստաւի գալուն, որ մեզ ազատի, բայց նա իր ձեռքին պահակախումբ չունէր մեզ դուրս հանելու համար: Թուրքերն էլ ցանկանում էին օր առաջ յանձնել մեզ կառավարութեան, որպէս զի ազատ լինէին պատասխանատուութիւնից:

Երէկվայ եկողներն են՝ Ջահան Ալեքսանեան, Խաչատուր Աւագեան և Մկրտիչ Մայիլեան:

Աւագեանին պահող Թուրքը ստիպված է եղել մի որոշ գումար վճարել Թուրքերին, որպէս զի նրանք չը պահանջեն իրանից հային:

Հայերից 20 հոգի գտնվում են Բօզարդանլու Թուրք գիւղում, միւսները ցրված են Մանսուրլու, Ղարախանլու և Խաթունլու գիւղերում:

Եթէ շուտով օգնութիւն չը լինի, կըրզանցիներին, նրանց կարող է վտանգ սպառնալ:

Թիֆլիսում գտնվող կըրզանցիները դիմել են մի քանի անգամ Փոխարքայի օգնականներին և Փոխարքայի դիւանատանը: Եւ նրանց խոստացել են օգնել: Ուղարկվել են նոյն իսկ հեռագիրներ:

Բայց մինչև այժմ ոչ մի օգնութիւն չէ եղել:

II

Ահա ձեզ մեր ներկայ սարսափելի իրականութեան մի պատկերը:

Մենք տուել ենք մեր լրագրի մէջ կըրզանցիների մասին մանրամասն տեղեկութիւններ, սկսած նրանց գերութեան օրերից:

Իսկ նրանց գերութիւնը և նրանց գիւղի, Կըրզանի, աւերումը տեղի ունեցան Գանձակի աղէտից յետոյ:

Կըրզանը հայ-Թուրքական ողբերգութեան ամենասոսկալի տեսարաններից մէկն է:

Եւ տեսէք թէ ինչ հակադիրքեր են կանգնած մեր առաջ:

Վարչութիւնը և զօրքը գնում են Ուզունթալա, Քարվանսարա և ուրիշ հայ գիւղեր սաստելու և զսպելու հայերին, իսկ ամիսներ են անցնում և ոչ ոք չէ գնում հայ գիւղը քանդող և նրա բնակիչներին գերութեան մէջ պահող Թուրքերից պահանջներ անելու:

Երևակայեցէք մի րօպէ, եթէ հայերը լինէին գերի վերցրած Թուրքերին և նրանց կրօնափոխ արած: Միթէ կասկած կարող է լինել, որ այդ հայերը արդէն ծանր պատասխանատուութեան ենթարկված կը լինէին, իսկ նրանց գիւղերը ռմբակոծված, ինչպէս ռմբակոծվեցին Շուշու և Գորիսի մօտ գտնվող գիւղերը:

Հայերը վերջին ժամանակները սկսել են մի քանի տեղ խիզախել և իրանց ոյժը ցոյց տալ: Բայց այդ հանգամանքը ամենևին էժան չէ նստում նրանց վրա:

Եւ ինչ է դուրս գալիս մէջտեղից:

Ահա ինչ: Եթէ հայը թոյլ է պահում իրան, նրան վնասում է Թուրքը, կողոպտելով և կոտորելով նրան, իսկ եթէ նա կարողանում է քաջ լինել և նոյն իսկ մի փոքր պատիժ տալ իր վրա յարձակվողին, այն ժամանակ վարչութիւնն է շտապում նրան ընկճելու և պատժելու:

Ահա այդ ողբերգական դրութիւնն է պատճառը այն անվստահութեան, որով հայերը վերաբերվում են թէ դէպի Թուրքերը և թէ դէպի վարչութեան ներկայացուցիչները:

Հայերին հաւատ ներշնչելու համար դէպի Թուրքական հաւաստիացումները հարկաւոր է, որ Թուրքերը դադարեն յարձակումներ կազմակերպելուց և ապացոյցներ տան, որ նրանք իսկապէս զղջացել են իրանց արածի համար, իսկ վարչական ներկայացուցիչները պարտական են կտրական քայլեր անել աւազակներին զսպելու և գազանութիւնները կանգնեցնելու, որպէս զի հայ գիւղացին հաւատայ, որ իսկապէս նրա մասին կայ հոգացող իշխանութիւն:

Լրանում է թշուառութիւնների տարին:

Գոնէ տարեդարձի օրը կարողանայինք ասել, որ աղէտը անցել է և դարձել պատմութեան սեփականութիւն:

Դժբաղդաբար այդ հաւատը չը կայ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Քարվանսարա, 31 յունվ. 8 ժամ 10 րոպէ.

Քարվանսարա եկած զօրքերը վերադառնում են Ղազախ:

—

Ղօշխօթան (Ղազախի գաւառ) յունվարի 30-ին.

Սրանից մի քանի շաբաթ առաջ յայտնեցինք, թէ ինչպէս 12 հայերին Թուրքերը այրեցին Ղարահամզի կոչված գոմերում, և ասեցինք թէ դա Իբրահիմի գործն էր, որը հէնց վերոյիշեալ գիւղի անտառապահն էր: Չը բաւականանալով դրանով, Իբրահիմը յունվարի 20—21-ին գնում է իր խմբով և շրջապատում է հայաբնակ Պիպիս գիւղը. ինքը մտնում է գիւղը, մօտենում է եկեղեցուն և սկսում է զանգահարել, հետո էլ գոռալ:

Հէնց այդ ժամանակ գիւղում ոչ ոք չէ լինում, բոլորն էլ գաղթած են լինում հայաբնակ գիւղեր: Գիւղի շուրջը դիրք է լինում պահպանելիս Ղազոյի տղայ Գրիգորը իր կտրիճներով: Իբրահիմը գոռալով համ զանգն է խփում, համ ասում է մեր տղերանցը, թէ եկէք այստեղ՝ թազայ խաբար եմ ասում:

Բայց Գրիգորը չէ խաբվում, ասում է իր ընկերներին, որ չը խաբվեն, իսկ ինքը հրացանի փողը ուղղելն ու Իբրահիմին վայր գլորելը մէկ է անում: Թուրքերը երբ տեսնում են, որ իրանց խմբապետը սպանվեց և ոչ մի բան չէ լինելու, սկսում են փախուստ տալ դէպի Ղըզլհաջլու, Քօրփլու Թուրքաբնակ գիւղերը:

Ահա այդպէս վերջացաւ այն արիւնախումի կեանքը:

Սակայն Թուրքերը չը հանգստանալով հաւաքվում են մեծ քանակութեամբ հետևեալ Թուրք գիւղերից՝ Ղըզլհաջլուից, Քօրփլուից, Ուլքիմալլուից, Ղուշչի և գող Այրումներից և այլ զանազան տեղերից ու դիրք են բռնում Թուրք Ոսկեպատ գիւղում:

Եւ ահա ներկայ յունվարի 25—26-ին սկսվում է արիւնահեղ կռիւ: Այդ կռւին վրա է հասնում հերոս Շխալին իր առիւծներով և քաջ խմբապետ Համօն իր կտրիճներով: Այստեղ սկսվում է տաք կռիւ երկու կողմերի մէջ. Թուրքերը մեծ կորուստ են տալիս այդ կռւում, իսկ հայերը չնչին կորուստ են ունենում. ընդամենը 4—6 հոգի են: Մեռնողներն են Ղօշխօթանցի Խէչկանց Յարութիւնը և Սարիբէգանց Մոսին, իսկ Բաղանիսից մէկ տղայ, Հասան անունով: Միւսները այլ տեղերից:

Տիգօ

—

Շուլաւէր յունվարի 28-ին:

Յունվարի 27-ի գիշերը, ժամը 11$^1/_2$-ին մօտ, յանկարծ լսվեց եկեղեցու զանգակների ձայնը: Իսկոյն իրարանցում ընկաւ ամբողջ գիւղի մէջ. ամեն կողմից լսելի էր՝ «կրակ են տուել, կրակ»: Ամենքը շտապում էին ականատես լինելու դէպքին: Կրակը գիւղումն էր. այրվում էին Բագրատ Տէր-Պօղոսեանցի խոտի դէզերը և դարմանը: Հարց ու փորձից իմացայ, որ իբր թէ նաւթ են ածել չորս բոլորը, յետոյ կրակել, որովհետև րոպէապէս բռնկվում է՝ չորս բոլորքը: Հայդուկային զինված խմբերը շտապում են դիրքերը. մի քանի խմբեր ուղարկվում են առաջ, որպէս զի պատրաստ կանգնած սպասեն, կասկածելով, որ կարող է մի խաբուսիկ երևոյթ լինել, և որին կարող է հետևել յարձակումն թշնամու կողմից: Բարեբախտաբար ոչ մի բան չէ պատահում:

Լուրեր են պտտում, իբր թէ անձնական թշնամութիւնից է առաջ եկած այդ բանը, ոմանք էլ կասկածում են թէ թշնամու գործ է, բայց առայժմ պարզված չէ:

Ու. Աղ. Բաղդասարեանց

—

Շուշուց Թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը հեռագրում է Նորին Սրբութիւն ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսին յունվարի 30-ին. «Ցաւօք սրտի հաղորդում եմ, որ գիշերս կալանաւորված են ամենախաղաղասէր և յարգի քաղաքացիները՝ բժիշկ Բահաթուրեանը և Գերասիմ Շահնազարեանը: Որպէս հոգևոր հովիւ հաստատում եմ, որ այդ անձինք կոտորածի օրից սկսած հանգստացնում էին ազգաբնակութեանը և ամեն ջանք գործ էին դնում հաշտեցնելու, այդ պատճառով էլ մեծ յարգանք ու համակրանք վաստակեցին ազգաբնակութեան լաւ մասի կողմից: Խոնարհաբար խնդրում եմ միջնորդել փոխարքայի մօտ շուտով արձակելու այդ անմեղ կալանաւորներին»:

—

Աշոտ եպիսկոպոսը նոյն օրը հեռագրել է Շուշուց Կովկասեան փոխարքային. «Գանձակի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ կալանաւորված են բժիշկ Բահաթուրեանը և Շահնազարեանը, խաղաղութեան ամենալաւ գործիչները, ինչպէս անգամ մինչև օգոստոսեան օրերը, խաղաղարար մասնաժողովի մէջ: Նրանք մինչև այժմ էլ գործել են ինքնաբերաբար, չը խնայելով ոչ ժամանակ և ոչ էլ ջանք, որի համար էլ ազգաբնակութեան լաւ մասի յարգանքին ու համակրանքին են արժանացել: Նրանք են հանդիսանում կայացրած խաղաղութեան ամենահաստատուն սիւները: Նրանց կալանաւորելը թիւրիմացութեան արդիւնք է և ամբողջ հայ ազգաբնակութեան վրա վհատեցուցիչ ներգործութիւն ունեցաւ: Ուստի խաղաղութիւնը հաստատուն դարձնելու համար, որին ազգաբնակութիւնը սաստիկ կարօտ է, պատիւ ունեմ խնդրելու ձերդ պայծառափայլութեանը ազատել այդ անմեղ ու ազնիւ գործիչներին կալանաւորութիւնից»:

—

Նախիջևանից յունվարի 31-ին Թովմա վարդապետը հեռագրում է.

«Գաւառապետը խաղաղարար մասնաժողովի հետ միասին շրջելով գաւառը, հրաւիրում է ազգաբնակութեանը ինքնաբերաբար վերջ տալ եղբայրասպան կոտորածին, նախազգուշացնելով, որ հակառակ դէպքում իշխանութիւնը ինքը վճռական միջոցների կը դիմէ վերջ տալու անկարգութիւններին և ամեն մի այդպիսի փորձ իր սաղմի մէջ կը խեղդի: Սուտ լուրեր տարածողները և յանցաւորները պատժի են ենթարկվում: Կարգադրութիւն է տրվել վնասված գիւղերի հարկերը ընդհատել»:

—

«Ցնոր. Փուրց.» լրագրին Պետերբուրգից հեռագրում են. «Հայերի և Թուրքերի ժողովը այն եզրակացութեան եկաւ, որ հայերի և Թուրքերի ընդհարումը սկսվել է պրօվօկացիայով և այժմ էլ շարունակվում է պրօվօկացիայի շնորհիւ»:

—

Քարվանսարայից յունվարի 31-ին ցերեկվայ ժամը 6 և 25 րոպ. «Յառաջին» հեռագրում են.

«Լէվիցկին հրամայել է գրաւոր երդմնաթուղթ վերցնել խոստանալու, որ անյապաղ երկու կողմից էլ վերջ կը դըրվեն թշնամական գործողութիւններին: Ամեն մի սպանութիւն, կողոպուտ, բռնութիւն չարաչար կերպով կը պատժվի զինուորական դատաստանով: Առայժմ արգելված է զէնք կրել, ուրիշին յանձնել և վաճառել: Շուտով կը սկսեն զինաթափ անել ազգաբնակութիւնը: Այսօր զօրքերը եկան: Լէվիցկին յայտարարում է. «Ես եկել եմ զսպելու և ոչ հաշտեցնելու: Ոչ մի պատգամաւորութիւն չէ ընդունվում: Ես միայն հրամայում եմ»: Ճանապարհները բաց են յայտարարված:

—

Զարդախլու, 27 յունվարի.

Գետաբէկի գործարանին կից գտնվող հայաբնակ Ղազախլու գիւղի կործանումից յետոյ Թուրքերը լիովին տէր դարձան Գետաբէկին, ուր ամենայն բան կառավարվում էր նրանց խորհրդով: Այդ տեղը հաստատվեց մի տեսակ Թրքական վարչութիւն:

Հայերի ահագին կարողութիւնը, որ բազմամեայ քրտնաջան աշխատանքի արդիւնքն էր, ժողովվեցաւ մերձակայ Թրքաբնակ Սոզուլլու գիւղը, ուր բնակվում էին ամենայանդուգն և արիւնարբու «այրում» կոչված Թուրքերը: Նրանք ոչ միայն լաւ զինված էին և քաջ կռւողներ, այլ և ձեռք էին բերել գործարանում՝ վաղուց ի վեր գտնվող թնդանօթը և վարպետ արհեստաւորներից թնդանօթաձիգ նշանակել: Մինչ այսպէս զինված կռվելու ամենայն յարմարութիւնով և շլացած առաջին աջողութիւնով՝ մտադիր էին ուրիշ հայ գիւղերի վրա յարձակվել. յանկարծ հանգամանքները այլ կերպ փոխվեցին և նրանք ստիպված եղան պաշտպանողական դիրք բռնել:

Բանն այն է, որ շատերին էր զբաղեցնում այդ չարագործների որբանը, որ այնքան մեծամեծ չարիք էր պատճառել: Այսպէս ահա ճիշտ յունվարի 1-ին, նոր տարվայ նշանաւոր և ազգերի կեանքի համար պատմական օրը, մի բուռն քաջեր յանկարծ պաշարեցին Սոզուլլուն. գիւղի բոլոր դիրքերը բռնելով, նրանք միակ փախչելու ճանապարհի վրա պահապաններ դրին, որ փախուստի հնար չը լինի...

Ժամի 1-ին հրացանի միանուագ ձայթիւնը սարսափի մէջ ձգեց քնաթաթախ բնակիչներին: Չանցաւ 15 րոպէ և հրեղէն սիւները՝ ինչպէս դժոխքի գուշակներ՝ արտափայլեցին մերձակայ լեռների վրա և լուսաւորեցին հսկայական անտառը և միշտ մշուշապատ Գետաբէկի գործարանը, որտեղ այդ ժամին, նոր տարվայ առթիւ հիւր գտնվող դրագոնները գիշերվայ զուարճութիւնով հմայված ննջում էին: Աւտոդափէն նրանց ևս սթափեցրեց և նրանց հայատեաց սպան, որ դժբախտաբար՝ մի նշանաւոր հայի ազգանունն է կրում, րոպէապէս իմանալով եղելութիւնը, շտապեց դէպի աղէտի վայրը:

Այդ ռազմիկ քաջերը, որ հայ կոտորածի և աղէտի ժամանակ միշտ ձեռնպահ են և հրաման չունեն պաշտպանելու, իսկոյն մի զալպով իմաց տուին հայ քաջերին իրանց ներկայութիւնը: Հայերը ստիպված էին յետ նահանջել, (որովհետև դրագոնների դէմ կռիւ մղելու նպատակ չունէին):

Թուրքերը սիրտ առնելով զօրքի ներկայութիւնից, սկսան կրակել հայերի վրա, որոնք քայլ առ քայլ յետ էին նահանջում տանելով իրանց հետ Գետաբէկից բերված հայի կարողութիւնը:

Թշնամու կողմից բազմաթիւ բացի վիրաւորներից կռւի դաշտում մնացին մի քանի տասնեակ սպանվածներ, իսկ հայերի կողմից 10 հոգի սպանված և վիրաւոր և մէկ անյայտ կորած: Հանգամանքները փոխեցին կռւի հետևանքը և Գետաբէկը, որ մեր քաջերի նպատակն էր, մնաց դարձեալ թշնամու ձեռքին: Պրիստաւ Մուսէիբը մնաց անպատիժ և կրկին իր պաշտօնում:

Մի նկատողութիւն: Նոյեմբերի 18-ից սկսած Դալլարից—Գետաբէկ ճանապարհը փակ լինելով ահագին դժուարութիւններ է ներկայացնում Գանձակ գնալը: Որովհետև մինչև այժմ պօստը ստացվում էր Գետաբէկի գործարանի շնորհիւ: Այժմ Թուրքերի երկիւղից պօստատար ռուս պահակները չեն կարողանում մեր գիւղով անցնել, որով և մենք զրկված ենք լրագիր ստանալու կամ նամակ ուղարկելու հնարաւորութիւնից և շատ ուշ ուշ պօստը ենք ստանում: Այս է պատճառը նամակիս այսքան ուշ ուղարկելը:

Ռն

—

Սոֆիա, յունվարի 31-ին

Մունիր փաշան գնաց Բուխարէստ, ինչպէս ասում են, հայկական հարցը քննութեան ենթարկելու նպատակով: Երեկ նրա միսսիան Սոֆիայում անհետևանք մնաց: Իշխան Ֆերդինանդը շաբաթ օրը գնաց Եվխինօգրադ, թողնելով Մունիր փաշայի հետ բանակցելու խնդիրը կառավարութեանը: (Հեռ. Գործ.)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Տող, յունվարի 21-ին: Գործադուլի պատճառով մենք չը կարողացանք «Մշակի» ընթերցողներին գրել մեր կողմերում պատահած սպանութիւնների, աւազակութիւնների և բօյկօտի մասին:

Թուրքերը մեզ յայտարարել են յամառ բօյկօտ, այնպէս որ ամենահարկաւոր բաները ինչպէս են՝ հաց, նաւթ, աղ, շաքար, ծխախոտ և այլն մեր կողմերում այժմ հազուագիւտ բաներ են: Գիւղացին առանց աւելորդութիւնների կարող է «եօլայ» գնալ, բայց առանց հացի նա գոյութիւն ունենալ չի կարող: Շուշուց վերջին յայտնի դէպքերի պատճառով մեր գիւղացիները թէ բարձր գներից հրապուրվելով, թէ իրանց քաղցած եղբայրներին օգնելու համար, ունեցած հացը տարան Շուշի ծախելու, իսկ այսօր իրանք մնացել են սովի ճանկերում: Ի՞նչ կը լինի յետոյ, չենք իմանում, բայց կարծում ենք, որ պիտի շատ վատ լինի, որովհետև կառավարութիւնը մատը մատին չի խփում այս խայտառակ բօյկօտին վերջ դնելու, իսկ Թուրքերը, կարծելով թէ քաղցից պիտի ոչնչանանք, յամառ կերպով շարունակելու են բօյկօտը: Մենք էլ սարքեցինք բօյկօտ և ածուխի ու փայտի գները Թուրքերի մէջ սաստիկ բարձրացան, բայց այստեղ օգնութեան հասան կառավարութեան ներկայացուցիչները և կօզակի միջոցով ամեն ինչ հայ գիւղերից տարան:

Մի հարց այդ Թուրքասէր պարոններին: Երբ կարելի է կօզակների միջոցով 12 վերստ հեռաւորութիւնից փայտ ու ածուխ տանել, մի՞թէ չի կարելի երեք վերստ հեռաւորութեան վրա կօզակների միջոցով քաղցած գիւղացիներին հաց մատակարարել (Ղարաբուլաղից մինչև հայ գիւղերը 15 վերստ է, որից երեքը Թուրքերի շրջանումն է, իսկ 12 հայերի): Ուրեմն հայը թող քաղցից մեռնի, փոյթ չէ Գօլիցինի արբանեակներին. իսկ Թուրքը. ճհ, ինչպէս կարելի է, որ նա առանց փայտի մնայ այս ցուրտ ձմեռը. նրա համար կօզակներ չկա՞ն: Մի քիչ գութ ու արդարութիւն, պարոններ:

Մեր անամօթ թշնամիները բացարձակ սպանել չեն կարողանում, նրանք պատահած անզէն հային ողջ բռնում ու տանում են Ղարաբուլաղ, կամ եթէ սպանում են, սպանվածի գլուխը տանում են Ղարաբուլաղում բնակվող շուշեցի Թուրքերի վրա ծախելու լաւ գնով: Ե՞լ սրանից մեծ գազանութիւն. այսպիսի բաները յատուկ են Ամերիկայի վայրենիներին. մեր դրացիները նրանցից էլ անցան: Հայի գլուխը շատ թանգ են գնահատում, ուստի աւազակները աշխատում են որքան կարելի է շատ հայ գլուխ կտրել: Այսպէս սպանում են մի շուշեցու, գլուխը ու ոտքերը տանում: Երեք հոգի Թաղաւարդ գիւղից ցորեն գնելու են գնում ու մինչև օրս չը կան. ողջ-ողջ են բռնել: Երկու մարդ Ազոխ գիւղից գնում են իրանց գոմերից խոտ բերելու գիւղը, բայց անհետանում: Բիւրաթաղ գիւղից սպանում են մի քաջ երիտասարդի և քիթն ու ականջը տանում: Մի կողմից էլ մի խոզարածի Մուսմալլար գիւղի Թուրքերը բռնում տանում են: Երկու հոգի Գորմանջուղ գիւղից շաքար են բերում հայ գիւղերում ծախելու, բաց նրանց մէկին բռնում են ու բեռի հետ տանում, իսկ միւսին աջողվում է փախչել. այս վերջինի բռնողներն են Բիւրաթաղ գիւղի գզան բէկերը Ջամալը և Միրզալին: Թաղաւարդ գիւղից տանում են Իլիկօ Մելիք-Շահնազարեանցի երկու ծառաներին ու բոլոր տաւարը: Տաւարի գողութեան համար աւելորդ եմ համարում գրել, որովհետև նրանք անհաշիւ են:

Բաւական չէ այս, Թուրքերը հրդեհում են Սարգիսաշէնի մնացած գոմերը (մի մասը առաջ էին հրդեհել):

Այս բոլոր գազանութիւնները հայը անմռունչ տանում էր, իսկ գաւառական իշխանութիւնը մատերի արանքով է մտիկ տալիս այս բոլորի վրա: Համբերութիւնը վերջացել էր, ուստի հայերը յարձակվեցին Ղաջարի վրա, այդ աւազակային որջը քանդելու: Յարձակումն եղաւ ամսիս 11-ին գիշերով և երկու ժամվայ մէջ այդ ահագին գիւղը քաջ մարտիկների ձեռքին էր: Ղարաբուլաղից կօզակներ ու ահագին թւով Թուրք ձիաւորներ հասան: Հայերը տեսնելով կօզակներին, դատարկ գիւղից նահանջեցին, բայց լրագիրներում Թուրքերը ցոյց են տալիս, թէ հայերը փախան. թողնենք այդպէս ասել, իսկ եղելութիւնը կը մնայ եղելութիւն: Աւազակները թող այժմ լաւ հասկանան, որ թէպէտ մենք խաղաղ ժողովուրդ ենք, կռիւ չենք սիրում, բայց պատժել գիտենք, այն էլ սաստիկ պատժել: Ինչ վերաբերում է Ղաջարում սպանվածներին, կասենք, որ Թուրքերը շատ են ուզում իրանց սպանվածների թիւը պակասեցնել, բայց համեմատական թիւը այսպէս է 1-ի դէմ 8, դեռ չենք ասում այրվածների ու փլատակների տակ մնացածներին: Հայերը ձեռք չը տուին ոչ մանուկների և ոչ կանանց: Մենք պատժել գիտենք աւազակներին, իսկ անմեղների հետ գործ չունենք:

Լեռնեցի

—

Ջուլֆայ, յունվարի 26-ին

Երեկ, յունվարի 25-ին, երեկոյեան ժամը 8-ին, այստեղ սպանվեց յայտնի ոճրագործ կոնտրաբանդիստ սուջեցի Քալբալի Խալիլը:

Վերջերս «Մշակ»-ում գրվեց, որ Նախիջևանի ճանապարհին Թուրքերը յարձակվելով հայ ճանապարհորդների վրա, սպանեցին 9 հոգի: Այդ յարձակվողների մէջ է եղել այս գազանը: Նոյն այդ Խալիլն էր, որ այդ 9 հոգուն սպանելուց առաջ, դարձեալ Նախիջևանի ճանապարհին սպանում է Արազին գիւղից մի հայ երիտասարդի: Ժողովուրդը լաւ էր ճանաչում դրանց. վերջապէս ընկաւ գազանը: Սպանողը իր ընկերն է, Նեհրամցի մի Թուրք, որը խոստովանվելով իր յանցանքը, ձերբակալվեց: Ոճրագործի գրպանից հանել են ոստիկանական եսաուլի և ստրաժնիկի պագոնները, որոնք վերջին սպանութիւնների ժամանակ նա կրելիս է եղել:

Այստեղի Թուրքերի և հայերի յարաբերութիւնները լաւ են:

Տեղիս սիրողները Թուրքերի հետ մի ներկայացում տուին. խաղացին «Կըռ-կըռթ» վօդվիլը. երկու կողմից էլ բաւական բազմութիւն կար. ներկայ էին մաքսատան համարեա բոլոր ծառայողները: Միանգամայն գովելի է երկու հարևան ազգերի այդ համերաշխութիւնը, և մենք անկեղծ սրտով կոչ ենք անում մեր հարևան դրացի Թուրքերին, կռւել այն չար «ոգիների» դէմ, որոնք կը յանդգնին երկու ազգերի բարեկամական այդ կապը խզել:

Այս կողմերը սկսել է տաքանալ. ձիւն համարեա թէ չկայ: Այս տարի Արաքսը չը սառեց. ժողովուրդը երկիւղ էր կրում, որ Արաքսի սառումով Պարսկաստանից կարող են աւազակախմբեր անց կենալ:

5 օր առաջ Հին-Ջուղայում գտնվող ֆելդշերի կինը անձնասպանութիւն գործեց:

Մինաս Մինասեանց

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Գօրի: Գօրի քաղաքում այժմ ընդամենը 64 թնդանօթ կայ: Այդ թնդանօթները կրկնակի թւով աւելի ծառայողներ ունեն, քան հարկաւոր է: Եօթ հարիւրի չափ են կազակների թիւը գիւղերում: Ջուխտ-ջուխտ են շրջեցնում թնդանօթները, և հետն ունեն մի մի վաշտ զինուոր և հարիւրեակ կօզակներ: Երկու թնդանօթ դրված է գիւղից ներքև—անտառում և չորսն էլ Օձիսում: Ներքին-անտառում կանգնած են 50 կազակ և Օձիսում. 80 կազակ: Օձիսի թնդանօթները անցնում են նոյնպէս Դուշէթի գաւառը: Այս օրերս յարձակում գործեցին Զալիս գիւղի վրա և քարուքանդ արին Նազար Նօնիաշվիլի տունը:

Երկաթուղու իւրաքանչիւր կայարանում զօրք է կանգնած, կէս վաշտ զինուորներ իրանց օֆիցէրով: Մի մի տեղ կազակներ են կանգնած: Գեներալ-նահանգապետը յայտարարեց, որ եթէ կարճ միջոցում պրիստաւ Աւալիշվիլիի սպանողներին չը գտնէ ժողովուրդը և չը յանձնէ իշխանութեան, մի քանի տներ ռմբակոծութեան կենթարկվեն: Ժողովուրդը չէ կարողանում գտնել պրիստաւի սպանողներին և չը գիտեն թէ ինչ անեն: Երդվեցին գեներալ-նահանգապետի առաջ, որ Աւալիշվիլիի սպանողները թաքնված են և իրանք չը գիտեն թէ ո՞ւր են:

Զօրքը և ադմինիստրացիան արգելեցին կոտորել անտառները, այնպէս որ մինչև անգամ փայտ բերելու իրաւունք էլ չունին: Ադմինիստրացիան ամենքին յայտարարեց, որ եթէ ագիտատորներին, պրօպագանդիստներին և զէնքը շուտով չը յանձնեն, բոլոր գիւղերում քարուքանդ կանենք մի քանի տներ, և այդ տների ցուցակը արդէն կազմած ունենք:

Դօէսի և Կասպի գիւղերի հասարակութիւնները որոշում կայացրին, տալ գլխահարկ ըստ կարողութեան և որքան հնար է շուտով հաշտութիւն կայացնել կալուածատէրերի հետ: Ամեն օր տեսնում էք զէնքերով լի սայլեր Գօրի գնալիս և այդ զէնքերը յանձնում են ադմինիստրացիային:

Մինգրելիա: Ախալ-Սենակում, որպէս լրագիրներում արդէն յայտնված էր, առաջին «իլիւմինացիան» մինչև յունվարի 20-ը սարքվեց: Այն ժամանակ այրվեց Սենակի Նորմալ դպրոցի տեսչի երեք խանութը և մէկ էլ իշխ. Դ. Մխէիձէի խանութը: Այս կիրակի զօրքը Բանձի կողմը գնաց: Ճանապարհին քանի չափ տներ այրվեցին: Ի միջի այլոց երդուեալ հաւատարմատար Փալաւաձէի տունն էլ է այրվել: Զօրքը եօթը ութ օֆիցէրներ ունէր: Վաճառականները սաստիկ վնասված են.

Յունվարի 28-ին, 12 ժամին, կրկին հրդեհ բռնկվեց Ախալ-Սենակում: Չը գիտենք ինչ անենք: Ժողովուրդը ամբողջապէս անտառներն է ապաստանել: Այս դրութեան մէջ լաւ է մահ, քան կեանքը: Պրինցէսի Միւրատի կալուածքում և տան մէջ հարիւրեակ կօզակներ են կանգնած:

Այսօր, շաբաթ, հրդեհված քաղաքի մէջ մեծ առևտուր կար. այդ օրը դուրս էին բերել կահ կարասիք ծախելու: 15 ր. արժէք ունեցող եախշիքն 4 րուբլով էին ծախում, բայց ինչ արած, որ այստեղ չէին ծախվում գոտակներ, կօշիկներ, կաշիներ, փարչեղէն, չթեր, մի խօսքով այն բոլորը, ինչ զարդարում է քաղաքը: (Ցնոբ. Փուրց.)

—

Քութայիս, 31 յունվարի: Գաւառական վարչութեան ներքին յարկում գտնված սրճարանի հրդեհից այրվեցին բժշկական և շինարարական բաժանմունքները բոլոր թղթերով: Հրդեհի ժամանակ կողոպտված են մօտակայ խանութները: Պետ. Հ. Գ.

ՄԱՄՈՒԼ

Ի՞նչ պէտք է անէին ռուսները, նուաճելով Կովկասը, և ինչ արին նրանք իսկապէս—ահա հարցեր, որոնցով զբաղվում է ռուս և եւրոպական մամուլը:

«Своб. Трудъ» ռուս թերթը գրում է.

«Կովկասը դարձաւ ռուսական:

Բայց ձուլվեց նա արդեօք յաղթող—երկրի հետ:

Ոչ—և դրա պատճառները շատ են: Գլխաւորը—այն է, որ մենք կարողացանք աւարտել միայն Կովկասի պատերազմական նուաճումը, բայց անզօր հանդիսացանք պահել նրա բարոյական նուաճումը:

Ինչ կարող էինք մենք տալ նրա բնակիչներին, որոնց պատերազմի վիճակախաղը ենթարկեց մեզ, իսկ գերագոյն արդարութիւնը՝ պէտք է նրանց՝ մեր եղբայրները դարձնէր:

Մենք ոչինչ չը կարողացանք տալ, որովհետև մենք ինքներս ոչինչ չունէինք և դեռ ևս չունէինք այնպիսի մի բան, որ արժանի լինէր ուրիշ ազգերից խրացնելու:

Ոչ ազատութիւն, ոչ մարդկային իրաւունքներ, ոչ լաւ օրէնքներ, ոչ բարեխիղճ գործիչներ, ոչ բարի վարք, ոչ լուսաւորութիւն, ոչ իսկական հաւատ, մենք չը կարողացինք տալ...

Մենք դրանցից ոչ մինը չունէինք ինքներս—և եթէ երբեմն էլ ունէինք, այն էլ կիսատ-պռատ:

Եւ մենք կարող էինք տալ Կովկասին և տուինք, միայն այն, ինչ որ մենք ինքներս առատօրէն ունէինք:

Վատ օրէնքներ, վատ կառավարչութիւն, վատ բարքեր, վատ պաշտօնեաներ:

Մենք եկանք Կովկաս մեր ախտերով և ոչ մեր առաքինութիւններով:

Փոխանակ եղբայրանալու, մենք պահպանում էինք թշնամութիւն: Մենք գրգռեցինք մեր դէմ նոյն իսկ այն ազգերին, որոնք իրանց դիմել էին մեր հովանաւորութեան: Մենք ցանկացանք ձեռնամուխ լինել ոչ միայն նրանց նիւթական, այլ և բարոյական ստացուածքին: Մենք յաղթեցինք գոռող, ազատասէր մարդկանց մեր զէնքի գերազանցութեամբ, բայց մենք ոչինչ չարինք նրա համար, որ նրանք կարողանան հաշտվել իրանց պարտութեան հետ և ցանկանալ ձուլվել մեզ հետ:

Մենք ոչինչ չարինք նրա համար, որ խելացի կերպով, երկրի բարիքի համար շահագործենք նրա բնական հարստութիւնները: Մենք նոյն իսկ չը կարողացանք հարստանալ ինքներս դրանցով և թողեցինք այդ օտարականներին:

Անմիտ քաղաքականութեամբ մենք պահպանեցինք թշնամութիւն Կովկասի առանձին ազգերի մէջ, փոխանակ որ նրանց ձուլենք մեզ հետ:

*

Նոյն խնդրի մասին անգլիական «Blockwood's Magazine» թերթի մէջ մի յօդուած է գրել գնդապետ Բերեսֆօրդ, որ առաջ զինուորական գործակալ է եղել Պ.-Բուրգում.

«Ռուսները Կովկասում—ասում է նա—օգուտ չը քաղեցին ոչ հայերի առևտրական ընդունակութիւններով, ոչ վրացիների տաղանդներով, ոչ թուրքերի քաջութեամբ, ոչ պարսիկների դիմացկունութեամբ: Այն բոլոր սխալները, որ անգլիացիները գործեցին Իրլանդիայում, ռուսները կրկնեցին, չը փորձելով—ինչպէս անգլիացիները արին վերջերս—ուղղել այդ սխալները: Փոխարքաներից մէկը շատ խիստ էր, երկրորդը շատ թոյլ էր: Վօրօնցովը միակ մարդն էր, որ բոլորովին հասկանում էր թէ ինչ է պէտք Կովկասին և միակ խաղաղացուցիչն էր: Ռուսաստանի 50-ամեայ տիրապետութեան արդիւնքը եղաւ քաօսի տիրապետութիւնը: Նա, հաւանօրէն, ստիպված կը լինի նորից նուաճել այդ երկիրը»:

*

Լեհաստանի խնդիրը և նրա լուծման եղանակի հարցը վերջերս մի ամբողջ գրականութիւն է ստեղծել թէ ռուսական և թէ եւրոպական գրականութեան մէջ: Ինչպէս յայտնի է, լեհերը պահանջում են տալ իրանց աւտօնօմիա, մնալով հանդերձ անբաժան Ռուսաստանից: Սակայն աւտօնօմիայի հարցը այն գլխաւոր վէճն է, որին բաղխում են նոյն իսկ ռուս սահմանադրականներից շատերը: Մի մասը ոչ մի վտանգաւոր բան չէ գտնում Ռուսաստանի համար Լեհաստանին աւտօնօմիա տալը, մի այլ մասը, ընդհակառակը, աւտօնօմիայի մէջ տեսնում է մի շատ մեծ քայլ դէպի սեպարատիզմը, բաժանումը և առաջարկում է տալ միայն տեղական ամենալայն ինքնավարութիւն:

Այժմ յայտնվում է և մի երրորդ կարծիք—տալ Լեհաստանին կատարեալ անկախութիւն, այն է թոյլատրել նրան բաժանվել Ռուսաստանից և կազմել մի առանձին պետութիւն: Այդ առաջարկութիւնը անում է ակադեմիկոս Սօբոլեվսկին «С. Петерб. Вѣд.» լրագրի մէջ (№ 279): Իր առաջարկը նա պատճառաբանում է նրանով, որ տալով Լեհաստանին անկախութիւն, Ռուսաստանը անհամար օգուտներ կունենայ թէ նիւթական և թէ քաղաքական:

«Ինտելլիգենտ—լեհի թշնամութիւնը դէպի «մօսկալը» ամենքին յայտնի է, ասում է հեղինակը: Ժամանակը չէ ջնջում այդ վէրքը և այժմ նա նոյնքան խոր է, որքան 1864 թ. և մենք պէտք է խոստովանենք, որ պահպանելով իրերի այժմեան կարգը, մենք չենք կարող յոյս ունենալ լաւագոյն ապագայի մասին: Պէտք է վերջ դնել այդ դրութեան:

«Կասկած չը կայ, որ մենք նուաճողներ ենք, մենք իրաւունք ունենք տիրել Լեհաստանին: Կասկած չը կայ, որ լեհերը անկարող են, առանց մեր համաձայնութեան, հեռացնել իրանց քաղաքներից մեր զօրքերը և պէտք է սպասեն, որ մենք կամաւորապէս հեռանանք:

«Բայց ինչի՞ է պէտք մեզ Լեհաստանը:

«Նրան տիրապետելը վնասաբեր է, թէ ընդհանրապէս Ռուսաստանի և թէ մասնաւորապէս ռուսական կենտրոնի համար»:

Այդ միտքը հեղինակը բացատրում է հետևեալ նկատումներով: Նախ, Ռուսաստանը ստիպված է 250 հազար զօրք պահել Լեհաստանում: Այդ զօրքը ահագին օգուտ է տալիս լեհ գիւղացիներին և հողատէրերին, որովհետև ամեն բան, ինչ որ արտադրում է լեհ գիւղացին, հողագործը, զօրքը գնում է փողով: Բացի դրանից ամեն մի ռուս զինուոր իր ընտանիքից ամենաքիչը ստանում է տարեկան 10 րուբլի, ուրեմն տարեկան մօտ $2\frac{1}{2}$ միլիօն րուբլի նոյնպէս մտնում է լեհերի գրպանը: Եթէ հաշուենք և զօրքերի պահպանութեան ծախքը, ուրեմն Ռուսաստանը ամեն տարի տասնեակ միլիօններ է թողնում Լեհաստանում, առանց փոխարէնը մի բան ստանալու Լեհաստանից, որովհետև լեհ զինուորների թիւը Ռուսաստանում շատ աննշան է:

Երկրորդ. Լեհաստանում գտնված Լօձիի և Սօզնովիցկէի ֆաբրիկներն են, որոնք գլխաւորապէս մանուֆ, չիթ և այլ ապրանք են հայթայթում ամբողջ Ռուսաստանին և ռուսական ապրանք իսկապէս չի կարելի գտնել ոչ Պետերբուրգի, Մօսկվայի, ոչ Տաշքենդի, ոչ Թիֆլիսի մագազիններում: Լեհաստանի այդ ֆաբրիկները, որոնք հիմնված են գերմանական կապիտալիստների և տեղական հրէաների դրամներով, գործում են գլխաւորապէս ոչ թէ Լեհաստանի, այլ Կայսրութեան ուրիշ տեղերի համար և հարստացնում են իրանց անգին արդիւնքներով լեհ, գերմանացի և հրէայ ժողովուրդները, մինչ ռուսական կենտրոնը աղքատանում է: Եւ հէնց այդ ֆաբրիկների պատճառով ռուսական ֆաբրիկները չեն կարողանում գործել: Պարզ է ուրեմն, որ Ռուսաստանը բացի վնասից, ոչ մի օգուտ չէ ստանում Լեհաստանից:

Երրորդ. կայ մի մեծ քաղաքական վտանգ. Ռուսաստանը այժմս բաժանված չէ ոչ մի սահմանով Գերմանիայից և կանգնած է նրան դէմ առ դէմ: Կարող է պատահել, որ ռուս զինուորները ստիպված լինեն յարձակվել իրանց գերմանացի եղբայրների վրա Լեհաստանի պաշտպանութեան համար: Յայտնի է որ Գերմանիան աչք է տնկել մեր լեհական երկիրների վրա և ոչ բուն ռուսական երկիրների վրա և եթէ Լեհաստանը մեր ձեռքին չը լինէր, մենք կարող էինք շատ բարեկամօրէն ապրել Գերմանիայի հետ, չը վախենալ ամեն րոպէ նրա յարձակումից և աւելի քիչ զօրք պահել:

Այս բոլոր նկատումները հասցնում են ակադեմիկոս Սօբոլեվսկուն այն եզրակացութեան, որ «եթէ մենք ռուսներս սիրում ենք մեր ազգը և բարիք ենք ցանկանում մեր ռուսաց պետութեան, մենք պէտք է գոհացումն տանք լեհերի փափագին: Բայց ոչ թէ տանք նրանց աւտօնօմիա իրանց սեփական սէյմով և զօրքով, կօնտրօլով մեր առևտրի վրա, այլ առաջարկել նրանց կատարեալ անկախութիւն: Այդ ժամանակ մենք կարող ենք ծախել լեհական նոր թագաւորութեան մեր բերդերը Լեհաստանում, մեր երկաթուղային գծերը և մեր կառավարչական շինութիւնները Վարշավայում և ուրիշ քաղաքներում և մեր մաքսատները հաստատել Բելօստոկայում, նոր ռուս—լեհական սահմանագլխի վրա»:

Յօդուածագիրը բացատրում է ապա, թէ երբ մաքսերի հաստատմամբ լեհական մանուֆակտուրան այլ ևս չի տարածվի Ռուսաստանում, ռուսական աղքատացած կենտրոնը յարութիւն կառնէ և ռուս բանուորները աշխատութիւն կը գտնեն նոր ֆաբրիկներում:

«Եթէ լեհերը անջատութիւն կունենան—վերջացնում է նա իր յօդուածը—և կը կազմեն իրանց անկախ պետութիւնը—մենք կունենանք նրանց մէջ անկեղծ բարեկամներ և հաւատարիմ դաշնակիցներ: Իսկ եթէ նրանք անջատութիւն չեն ունենայ և Գերմանիան կը կլանէ նրանց, հէնց որ մեր վերջին զօրախմբերը կը թողնեն Վարշավան—այդ տեղ էլ մենք օգուտ կունենանք. աւելի լաւ է բարեկամ—գերմանական հպատակը, պատրաստ պայթեցնել կամուրջները գերմանական զինուորական գնացքների տակ, քան թշնամի—ռուսաց հպատակը, որից մենք մեր հողի վրա ստիպված ենք ամեն կերպ զգուշանալ և պաշտպանվել»:

Ի հարկէ, յարգելի ակադեմիկոսի այս հայեացքների շատ կէտերի մասին կարելի է վիճել, բայց մեր նպատակն էր միայն ցոյց տալ, թէ ինչ տեսակ հոսանքներ կան ռուս կեանքի մէջ լեհական հարցի վերաբերմամբ:

ՍԵՆԱՏՕՐ Ա. Մ. ԿՈՒԶՄԻՆՍԿՈՒ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ

—

Բագուի 6—10 փետրվարի դէպքերը և նրանց ծագման պատճառները

Հետաքրքիր են այն փաստերը, որոնք վերաբերում են Բագուի յեղափոխական կուսակցութիւնների ցեղական կազմի մասին: Մինչդեռ հայ յեղափոխական կուսակցութիւնների անդամներ,—ասում է սենատոր Կուզմինսկին,—բացառապէս հայերն են կազմում, ռուս յեղափոխականների մէջ կարելի է գտնել ամենատարբեր ազգերի ներկայացուցիչներ: Օրինակ, 1902-ից մինչև 1905 թիւը սօցիալ-դէմօկրատիական բոլոր նշանաւոր գործերի համար պատասխանատուութեան են ենթարկված՝ 102 ռուս, 40 հայ, 20 հրէայ, 7 վրացի, 5 լեհ, 2 գերմանացի, 3 լատիշ, 1 լիտվացի, 1 թուրք: Սօցիալ-յեղափոխականների գործերի համար պատասխանատուութեան են ենթարկված բացառապէս ռուսներ:

Հայ և ռուս յեղափոխականները շատ փորձեր են արել գրաւելու թուրքերին դէպի յեղափոխական գործունէութիւնը, 1903 և 1904 թւերին շատ անգամ երևացին պրօկլամացիաներ թուրքերէն լեզուով՝ ուղղած թուրքերին: Այդ պրօկլամացիաներում քարոզվում է կռիւ ռէժիմի դէմ և խօսվում է այն բանի մասին, որ ոստիկանութիւնը լուրեր է տարածում, որ երբ հայերը կամենում են ջնջել մահմեդականներին, որ դա ճիշտ չէ և այլն: Ի պատասխան այդ պրօկլամացիաների՝ 1904 թւի ապրիլին երևաց պրօկլամացիա թուրքերէն և ռուսերէն լեզուներով «մահմեդական հասարակութեան» անունից, որի մէջ յայտարարվում էր, որ «մահմեդականները չեն ուզում մասնակցել հակակառավարչական որ և է ցոյցերի, և եթէ նրանց զօռով կը ստիպեն այդ քայլն անել, իրանք անշուշտ կառավարութեան կողմը կը կանգնեն»: Այդ պրօկլամացիայի առիթով սենատոր Կուզմինսկին յայտնում է, որ «դժբախտաբար, այդ պրօկլամացիայի ծագման և տարածման աղբիւրը անորսալելի մնաց»: Երկու ուրիշ պրօկլամացիաներ տպված են Ալեքսանդրիայի (Եգիպտոս) «Զախրա Նուամ» ամսագրում. Նրանցից մէկի մէջ հայերը հրաւիրում են մահմեդականներին դէպի յեղափոխական գործունէութիւն, սպառնալով արիւնով ներկել ամբողջ մահմեդական հողը, իսկ միւսի մէջ մահմեդականները պատասխանում են, որ ոչ մի խառնակութեան չեն մասնակցի, որովհետև ոչինչ ճնշումներ կամ անարդարութիւններ չեն կրում ռուս կառավարութեան կողմից, և եթէ հայերը իրանց թոյլ կը տան որ և է չար քայլ, ձգտում թուրքերի վերաբերմամբ, այն ժամանակ իրանք, մահմեդականները «անապատները կը դարձնեն հայկական մարմինների գերեզման»: 1904 թւին լոյս տեսաւ սօցիալիստական պրօկլամացիա թուրքերէն լեզուով «մահմեդական սօցիալիստական կօմիտէտ» ստորագրութեամբ, սակայն կօմիտէտի գոյութիւնը կասկածելի է թւում այն պատճառով, որ ոչ նրա կազմը, ոչ էլ տպարանի գտնվելու տեղը մինչև այժմ չէ իմացված, և ուրիշ ցուցմունքներ էլ ձեռք բերված չեն կօմիտէտի և տպարանի գոյութեան մասին:

Մահմեդականների խուսափումն յեղափոխութեանը մասնակցելուց, սենատոր Կուզմինսկի վերագրում է նրանց հաւատարիմ հպատակութեան պարտքին, որ կազմում է նրանց կրօնի դաւանանքը: «Սակայն չէ կարելի պնդել, վերջացնում է այդ միտքը զեկուցման հեղինակը, որ մահմեդական մասսան առ միշտ կը մնայ սակաւ ընդունակ իւրացնելու սօցիալիզմի և յանդուգն քաղաքական վարդապետութիւնների գաղափարները: Հրէաները, որոնք նոյնպէս աստուածպետական էին (թէօկրատներ), այժմ մեծ մասնակցութիւն ունեն յեղափոխական շարժման մէջ, որի համար նրանք ստիպված էին հրաժարվել իրանց աստուածպետական հայեացքներից: Արդեօք տեղի կունենայ այդ երևոյթը մահմեդականների մօտ և արդեօք որքան երկարատև կը լինի նա, դժուար է, ի հարկէ, ասել, բայց անպայման ուշադրութեան արժանի է այն փաստը, որ նրանք մասսաներով մասնակցում էին գործադուլներին, որոնք տեղի ունէին 1904 թւի դեկտեմբերին և 1905 թւի մայիսին, և շատ կարելի է նրանց ցոյց տուած մասնակցութիւնը կազմում է առաջին էտապը, հանդրուանը նրանց համար բացվող սօցիալական շարժման ճանապարհի վրա»:

Շօշափելով այն պատճառները, որոնք ազդեցին յեղափոխական շարժման զօրեղանալու վրա, որը մանաւանդ նկատելի էր 1903 թւի երկրորդ կէսից, սենատոր Կուզմինսկին, նախ և առաջ կանգ է առնում 1903 թւի յունիսի 12-ի օրէնքի վրա, հայերի եկեղեցական կալուածքները գրաւելու մասին: Եկեղեցական կալուածքների ընդունելութիւնը շատ քաղաքներում առաջացրեց խոշոր անկարգութիւններ, որոնց ճնշելու համար պահանջվեց զինաւորված ոյժ: Դա բարձրացրեց դժգոհական տրամադրութիւն մինչև անգամ այնպիսի տարրերի մէջ, որոնք մինչև այդ համեմատաբար հանգիստ էին: «Դրօշակեանների» կուսակցութիւնը, որը մինչև այդ ժամանակ իր համար միակ նպատակն էր դրել, որպէս վերև արդէն ասված է, կռիւ մղել Թիւրքաց Հայաստանում, այդ առիթով հրատարակեց մի պրօկլամացիա «ռուս քաղաքացիներին», որի մէջ նա յայտարարում էր, թէ կռւի յեղափոխական ճանապարհն է ընտրում ռուս կառավարութեան դէմ և, յիրաւի նա սկսեց լայն պրօպագանդա ազգաբնակութեան մէջ, բացարձակ խոստովանելով պրօկլամացիաների մէջ, որ իրանց ներկայացուցիչները յունիսի 12-ի օրէնքի պատճառով կատարել են մի շարք տէրրօրիստական գործողութիւններ, ադմինիստրացիայի ներկայացուցիչների դէմ:

Ապա սենատոր Կուզմինսկի մեծ նշանակութիւն է տալիս իշխանութիւնների գործողութիւններին, երբ գործադրվում էին ուժեղացրած պաշտպանութեան և քաղաքական խուզարկութեան վերաբերեալ օրէնքները:

Այն հարցը, թէ ինչն է համարվում քաղաքական անբարեյուսութիւն, շատ առաձգական է և լայն ասպարէզ է տալիս իշխանութեան հայեցողութեանը: Սենատորը մի շարք փաստեր է բերում, որոնք նման են անէկդօտների, որոնցից երևում է, թէ որպիսի հեշտութեամբ, եթէ աւելին չասենք, Բագուի իշխանութիւնները վերաբերվում էին ազգաբնակութեան իրաւունքներին: Մենք դրանց չենք բերի, բայց մի կտոր բերենք հաշւից, որը բաւական բնորոշում է դրութիւնը. «Ուժեղացրած պաշտպանութեան կանոնների գործադրութիւնը մի պայծառ արտայայտութիւն է այն իրաւական պայմանների կամ, աւելի ճիշտն ասած, ապօրէն պայմանների, որոնց մէջ գտնվում էր Բագու քաղաքի ազգաբնակութիւնը, բայց այդ պայմանները աւելի ևս արտացոլում էին հայերի վրա: Դրա ապացոյց կարող է ծառայել հետևեալ դէպքը. ազնուական Ռ. դիմեց Բագուի նահանգապետին՝ տպարան բանալու թոյլտւութիւն խնդրելով: Նահանգապետը հարցասիրում արեց դրա բարեյոյս լինելու մասին Բագուի ժանդարմական վարչութեան գլխաւորից, որը հաղորդեց, թէ ինքը չունի անբասիր տեղեկութիւններ Ռ.-ի մասին քաղաքական տեսակէտից և որ, այնուամենայնիւ, ցանկալի չէ, որ տպարան բանալու թոյլտւութիւն տրվի նրան, որովհետև Ռ.-ը հայ է, և նրա տպարանի մէջ կարող են կատարվել յանցաւոր, զուտ հայկական ազգային ուղղութեամբ գործեր»:

«Համառօտելու համար շարունակում է սենատոր Կուզմինսկի, այդ կարծիքի ամբողջ ոյժը և նշանակութիւնը անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ դժուար է թւել այն բոլոր դէպքերը, որոնց մէջ պահանջվում է վկայութիւն քաղաքական բարեյուսութեան մասին: Նա անհրաժեշտ համարվեց մի այնպիսի, ըստ երևոյթին, անմեղ պարագաների համար, որպէս ծովի մէջ ընկղմված շխունայի հանելն է»:

Ուսումնասիրելով Բագուի յեղափոխական շարժման ընթացքի պատմութիւնը, սենատոր Կուզմինսկի իր եզրակացութեան մէջ ասում է, որ նա «պահանջում է նրան դիմադրելու համար այնպիսի միջոցներ, որոնց մեծ մասամբ չեն համապատասխանում թէ այժմ ընդունված ճնշումների սիստեմը և թէ այդ տեսակի գործունէութեան կոչված կառավարչական օրգանների գործողութեան եղանակները: Հաշւի մէջ բերված փաստերը պարզօրէն ապացուցանում են, որ կռւի զէնքերը այդ շարժման դէմ ոչ միայն չեն թուլացնում նրան, այլ մինչև անգամ ամենևին խոչընդոտ չեն հանդիսանում նրան աւելի ևս աճելու և այնպիսի չափեր ընդունելու, որոնք վտանգաւոր են պետական կարգի համար: Ակներև է, որ ռէպրէսիան իր նպատակին չէ հասնում և շատ կարելի է, այն պատճառով էլ, որ յեղափոխական երևոյթները ծնեցնող պատճառները այնպիսի բնաւորութիւն ունեն, որ թոյլ չեն պատժական միջոցների ազդեցութեանը: Յեղափոխական շարժումը իր էութեամբ արտայայտում է գոհացում չը ստացած իրաւական, տնտեսական և սօցիալական շահեր»: Ռէպրէսիան ընդունակ է ճնշել դժգոհութեան առանձին արտայայտութիւնները, և նա ամենևին չէ քննում իր հալածած երևոյթների ծնող պատճառները: Այդ պատճառների քննութիւնը և գնահատութիւնը կազմում է պետական իշխանութեան նպատակը, որը հեռացնում է նրանց, ի միջի այլոց, կատարելագործվող օրէնսդրութեան միջոցով:» (Баку):

(Կը շարունակվի)

ԲԱԳՈՒԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

V

Մթնոլորտը ազատական ու յեղափոխական հովերով ալեկոծված է: Ցոյց տալ իրան աւելի արմատական քան արմատականը, աւելի յեղափոխական՝ քան յեղափոխականը—կազմում է բոլորի, մանաւանդ նրանց ձգտողութիւնը, որոնք ամենից աւելի աչքի են ընկել իրանց պահպանողականութեամբ: Ու Բագուի մահմետականները յաջորդաբար միտինգներ են սարքում, փառաբանում, աստուածացնում յեղափոխութիւնը, կանգնում՝ հասարակութեան առաջ իբրև կարմիր յեղափոխականներ:

Դա ռուս յեղափոխութեան ոսկեդարեան օրերումն է, առաջին և երկրորդ ընդհանուր գործադուլի միջոցներում: Գալիս են սակայն փորձութեան մեծ ու մռայլ օրերը, հնչում է ժամը, երբ պէտք է շունչ առնել, դատարկ խօսքերից անցնել լուռ ու հաստատ գործին—ոյժ տալ յեղափոխութեան կամ զինվել նրա դէմ, ուրիշ բառերով գործը համաձայնեցնել խօսքին:

Ու Բագուի մահմեդականները նորից ժողովվում են: Այս անգամ դեկտեմբերի 16-ն է:

Քաղաքագլուխ Սաֆար Ալիեւի առաջարկութեամբ միաձայն ժողովի նախագահ է ընտրվում Քարբալայ Իսրաֆիլ Հաջիեվ, իսկ քարտուղար՝ Ախունդ Եուսուֆ Դալիբ զադէ: Տեսարանը փոխված է: Բեմ է գալիս արդէն հոգևորականի [illegible]: Իւրաքանչիւր ժամանակ պահանջում է իր մարդը:

Նախագահը ամենից առաջ սովորական ու անխուսափելի շնորհակալութիւնը յայտնելուց յետոյ, սկսում է իր ճառը. «Ժողովուրդ! Մինչև այժմ մահմեդականների պետերը միշտ ազգի բարին են ցանկացել և շարունակ ցոյց են տուել նրան իր օգուտը: Այս վերջին ժամանակներս ռուս կառավարութիւնը հոկտեմբերի 17-ին իր հպատակներին խոստացել է որոշ ազատութիւններ, որպէս զի ամեն ազգ իր կողմից ներկայացուցիչներ ընտրելով գնան Պետերբուրգ պատգամաւորական ժողով կազմեն և հասարակութեան զանազան գործերը և կառավարութեան դէպի իր հպատակները ունեցած վերաբերմունքի օրէնքները քննելով ներկայացուցիչների ձեռքով մշակեն, վճռեն: Մենք մահմեդականներս էլ քանիցս յայտնել ենք մեր շնորհակալութիւնը կառավարութեան մեզ տուած խոստումների համար: Այստեղ մենք՝ մահմեդականներս՝ միւս ժողովուրդներից աւելի ենք: Ընդունելով հանդերձ սակայն, որ մահմեդականների ընդհանուր շահերը այդ ազատութեան մէջ են, պէտք է մինչև նրան վերջնականապէս արժանանալը, մենք մահմեդականներս հանգիստ ու խաղաղ մնանք, շարունակենք մնալ. արդ, մեզանից սակաւաթիւ մի քանի հասարակութիւններ, և գործադուլներ սարքող կուսակցութիւններ, թէպէտև ժողովներ կազմելով զանազան գործադուլների պատճառ են դառնում, բայց մենք՝ մահմեդականներս՝ նրանց չը խառնվելով մեր գաղափարին հաստատ ենք մնացել: Որովհետև մինչև այժմ նրանք մեր վրա ոչ մի ոյժ, ոչ մի ազդեցութիւն չեն գործ դրել: Ներկայումս նրանց բաց թողած մի քանի պրօկլամացիաներից, կոչերից երևում է, որ նրանք ուզում են մեզ էլ բռնութեամբ իրանց միացնել, ուզում են մեզ էլ հպատակեցնել իրանց գաղափարներին, որպէսզի մեր ապրանքները պակաս գնով ծախենք, տնատէրերի վարձը ամբողջապէս չը տանք, պակասեցնենք և մեր աղքատ աշխատաւորներին մղենք գործադուլ անել և ժողովուրդների այլ և այլ գոյքերը սեփականացնենք. բայց մենք մահմեդականներս յիշեալ պահանջներում չենք կարող նրանց միանալ, որովհետև մենք պարտականութիւն ունենք պահպանելու մահմեդականների ինչքը և մեր խեղճ ու կրակ մարդկանց, ամեն տեսակ միջոցներ գործ դնելով: Թէ յիշեալ պահանջները որ աստիճան համաձայն են շարիաթին, յարգելի ղազին կը բացատրէ ձեզ:»

Ժողովականները նախագահին յայտնեցին իրանց հաւանութիւնը:

Մեշէդի Մեհտի Զէյվադ.—Ներկայումս Բագւում գոյութիւն ունեն կուսակցութիւններ, գործադուլ սարքողներ, յեղափոխականներ, սօցիալ-դէմօկրատներ և այլ կուսակցութիւններ, բայց դրանց բոլորն էլ իրանց չը բանած օրերի համար առ հասարակ պատրաստեցին ամեն պաշարեղէններ. բացի այդ, գործադուլ արած այդ բանուորները իրանց գործարանի տէրերից իրանց չը բանած օրերի վարձն էլ բանի ստանում են: Երկաթուղային և այլ պաշտօնեաների ծառայողները արժանանում են գանձարանից իրանց ռոճիկն ստանալու գործադուլից յետոյ: Մի խօսքով նրանց բոլորի դրութիւնը ապահովված է: Իսկ մենք, մահմեդականներս, մեծ մասամբ, պտղավաճառներ, նպարավաճառներ ենք, և մեր գիւղացիները կանաչավաճառներ, ընդեղէնավաճառներ են. եթէ մենք գործադուլ անենք, մեր ապրանքները կը փչանան. և մեր չունեւոր դասակարգը, որ ապրում է իր օրվայ վաստակով, եթէ աշխատելուց դադարէ, քաղցած կը մնայ. այդ կերպով մեր քաղցած մնացող մահմեդականները կարող են անկարգութիւններ անել և նրանց շնորհիւ մեր ունեւոր հարուստ դասակարգերն էլ փորձանքի մէջ կընկնեն: Մեր մահմեդական բանուորների դրութիւնը միւսների նման ապահովված չէ: Նրանք՝ գործադուլի օրերի համար ոչ պաշարեղէն ունեն և ոչ էլ մենք այնքան փող ունենք, որ նրանց չաշխատած օրերի ծախսը հոգանք:

Հիւսէյն աղա.—Մահմեդականների ֆաբրիկներում, գործարաններում, տպարաններում, ջրաղացներում և այլ գործատներում աշխատող բանուորները միայն մահմեդականներ չեն, այլ ամեն ազգերից: Այդ գործաւորները գալով իրանց գործատէրերին յայտարարում են, որ մենք այս օրվանից չենք աշխատում, գործադուլ ենք անում, և մեր չաշխատած օրերի վարձն էլ ձեզանից ամբողջապէս պիտի առնենք: Ժողովը ինչ է ասում, կարգադրում այս մասին: Մինչև այժմ մենք փորձով գիտենք, որ բանուորներին՝ չաշխատած օրերի վարձը տալով մենք նրանց քաջալերում ենք իրանց տանը հանգիստ նստել և հէնց այդ պատճառով էլ նրանք միշտ կուսակից են լինում գործադուլ սարքողներին: Արդեօք այս կերպով մենք ինքներս գործադուլի շարունակման պատճառ չենք լինում: Եթէ գործատէրերը ազդարարեն բանուորներին, որ այս ինչ օրից յետոյ, եթէ չաշխատեն, այդ դէպքում նրանց չաշխատած օրերի համար ռոճիկ չի տրվի, հաւանական է, որ նրանք ոչ մի ժամանակ չնախընտրեն անգործ մնալը:

Ժողովը միաձայն վճռեց, որ գործատէրերի որոշած օրից յետոյ, եթէ բանուորները աշխատանքի գլուխ չկանգնեն, այն ժամանակ նրանք գործից հեռացրված պիտի նկատվեն և իրաւունք չպիտի ունենան չաշխատած օրերի վարձը պահանջելու:

Աղա Բալա Կուլիեվ.—Հաստատելով նախագահի և Մեշէդի Զէյվադի խօսքերը, յայտնում է, որ մահմեդականները աշխատում են իրանց անձնական շահերի և գուցէ ազգի դրութեան ապահովացումին. մի քանի կուսակցութիւնների տուած խոստումներին պէտք չէ հաւատալ ընծայել. յոյս պէտք է դնել Կայսրի հոկտ. 17-ին խոստացած ազատութիւնների վրա: Մենք մահմեդականներս, վճռապէս կը պահանջենք արժանանալ այդ ազատութիւններին, միայն թէ ներկայումս մի քանի կուսակցութիւնների գործերից երևում է, որ նախ մեր շուրջը, այսինքն կայարանում և այլ տեղերում գտնվող ապրանքները թալանելուց յետոյ, ձեռք են ուզում երկարել և՛ մեր մօտ գտնված ապրանքներին և վերջ ի վերջոյ մեզ մղել գնդակների առաջ: Ռուսաստանի մէջ ապրող երեսուն և հինգ միլիօն մահմեդականները, եթէ կառավարութիւնից այդ ազատութիւնները պահանջելով առնեն, իրաւունքների մեծ մասը մեր՝ մահմեդականներիս ձեռքը պիտի անցնի. դրա համար նրանք ուզում են արգելք հանդիսանալ, որ այդ ազատութիւնները մեզ չհասնեն: Ուրեմն ինչու միջոցներ ձեռք չառնենք մեր վրա բռնութիւն գործ դնելով՝ մեր խեղճ ու կրակ մարդկանց ոտի տակ տալ ցանկացող անձերի դէմ:

Իսաբեկ.—Եղբայրներ, հասել է այն ժամանակը, երբ մի ազգ պէտք է ինքը իր դարդին դարման անէ: Մենք էլ, հետևաբար, պէտք է մեր ցաւը բուժենք, որովհետև ուրիշ ազգերից ոչ մի ժամանակ մեր դարդին դարման չենք կարող ստանալ: Կարելի է ասել, որ ուրիշները մեզանից օգուտ տեսնում են, բայց մենք ուրիշների օգնութեան և պաշտպանութեան կարօտ չենք: Մենք ինքներս կարող ենք մեր գործերը կարգադրել: Ուրեմն, այս դէպքում, մենք՝ մեր ազգային սեփական օգուտները որոշելով, մեր ազգի դրութիւնը ապահովել աշխատենք. թոյլ չը տանք, որ մեր մահմեդականները ուրիշների ձեռքի տակ տրորվեն. մեր աղքատ և կարօտ դասի կացութեան մասին մտածենք. մինչև այժմ մեր հարուստները իրանց տներում հանգիստ նստած նրանց թշուառ ու վտանգաւոր դրութեամբ չեն հետաքրքրվում. մեր որբերն ու աղքատները մերկ, քաղցած, ծարաւ մնացած, չեն կարողանում ոչ մի տեղ դիմել, ոչ մի տեղ ապաստան գտնել: Նրանք էլ մեր եղբայրներն և ուղեկիցներն են: Պէտք է, որ նրանց մասին էլ մտածենք և անգործ խեղճերին գործ հայթայթենք և ոչ թէ աշխատողների գործադուլին պատճառ դառնանք: Վերջապէս կառավարութեան տուած խոստումները երբ իրագործվեն, բոլոր ազգերի մէջ ամենից շատ օգտվողը մենք պիտի լինենք: Այս մասին ուրիշների մեզ ցոյց տուած ուղին և առաջնորդութիւնը մեզ հարկաւոր չէ: Մենք ոչ ոքի հետ գործ չունենք: Մենք պարտաւոր ենք մեզ պաշտպանել որոշ անձերի մեզ հասցրած վնասի դէմ:

Երբ խօսելու հերթը գալիս է Ղազիին, ժողովականները ամբողջապէս վեր կենալով սկսում են «սալավաթ» կարդալ, աղօթքներ անել: Ղազին այնուհետև արտասանում է արաբերէն մի «խուտբէ», Ղուրանից մի աղօթք, և շարունակում է.

Ղազին.—Իսլամական կրօնի առաջին պատուէրն է հաշտութիւն և խաղաղ կեանք. ինչպէս հրամայել է մեր մեծ Մարգարէն, «մահմեդականն այն անձն է, որ ժողովուրդը նրա ձեռքից և լեզուից անվնաս մնալով նեղութիւնների չի ենթարկվի»:

Հետևաբար պէտք է, որ մենք մահմեդականներս հաշտ ու խաղաղ ապրենք. բոլոր մահմեդականներս կրօնի եղբայրներ լինելով՝ եղբայրութեան պարտականութիւնը մտքից չը հանենք, ինչպէս սուրբ Ղուրանում բարձրեալն Աստուած հրամայել է. «հաւատացեալները միմեանց եղբայր են»... Մեր նուիրական Մարգարէն Մէքքէից Մէդինէ գաղթելուց յետոյ մահմեդականներին եղբայրացրեց և հրամայեց, որ նրանք միմեանց հետ հաշտ և սիրով ապրեն. և նրանց հարուստ դասը՝ իրանց միւսլիմ եղբայրների հետ միութեամբ ապրելով՝ իրանց հարստութիւնը իրար մէջ բաժանեցին, կիսեցին, և այսպէս գուցէ մեր բուն կրօնը կայանում է նրանում, որ մենք միմեանց հետ եղբայրաբար, սիրով ապրենք և միւս բոլոր մարդկանց հետ խաղաղութեամբ և հաշտութեամբ կենակցենք. բայց այն ժողովուրդը, մարդկանց խումբը, որ կը ցանկայ մեզ՝ իսլամներիս վնաս հասցնել, մեզ մղել շարիաթի հակառակ գործերի մէջ, այդ դէպքում մեր պարտքն է նրանց չարը մեզանից հեռացնել: Մեր Կայսրի հոկտ. 17-ին տուած խոստումներից գոհ լինենք և մինչև վերջը համբերենք. չէ կարելի ժողովրդին ասել. ապրանքդ էժան ծախիր. սրբազան պատուէրի համաձայն պէտք է շիտակ առևտուր անել. և դարձեալ չէ կարելի ասել, որ տներդ էժան վարձով տուէք. դա հակառակ է շարիաթին... Եթէ ուրիշ ազգերից ձեզ նեղեն և ձեզ վրա բռնանան, այդ դէպքում պէտք է որ դիմէք ձեր պետերին, մեծամեծներին և նրանց խորհրդի համեմատ վարվէք: Եւ յետոյ, աւելացնեմ և այն, որ եթէ գործաւորներից որ և է մէկը աշխատել կամենայ, դրան ոչ մի արգելք չը կայ. և բռնի նրանց ստիպել չաշխատելու—ներելի չէ շարիաթով: Իսկ եթէ նրանք իրանց կամքով չաշխատեն, այդ դէպքում շարիաթի համաձայն վարձք պահանջելու իրաւունք չունին: Եւ ամեն մարդ պարտական է իր թաղում գտնվող վատ մարդկանց չարը իրանից հեռացնելու և աղքատներին օգնութիւն և պաշտպանութիւն ցոյց տալու...

Այնուհետև սուրբ մարդը շեշտում է մի քանի խօսքով Իսլամի այլ և այլ դաւանանքի պատկանողների պարտականութեան վրա, ասելու համար, որ նրանք պէտք է ձեռք ձեռքի տան և միութեամբ գործեն, որովհետև «իսլամական կրօնը մէկ կրօն է և նրան հետևողները կոչվում են միւսլիման. յետոյ են առաջ եկել շիա, սիւննի, շէյխի, ուսուլի և այլ անուններով յորջորջվող դաւանաբանական տարբերութիւնները:» Բայց մահմեդականները պէտք չէ ուշք դարձնեն այդ դաւանանքների վրա»... Ճառախօսը ներկաներից խնդրելով որ իր ասածները բացակայ եղող կրօնակիցների ականջին հասցնեն, վերջացնում է իր խօսքերը այնպէս, ինչպէս սկսել էր—աղօթքով:

Միրզա Հաջի Էֆենդի.—Իսլամի կրօնի մի և մի հատիկ լինելը ամենքին յայտնի է. ուրեմն պէտք է որ իսլամական ազգն էլ իսլամական մեծամեծների նման միացած լինի, միացած և համերաշխ լինի, ինչպէս պատմութիւնը ցոյց է տալիս որ էին հազրէթը Ալին, հազրէթը Աբու-բէքիրը, հազրէթը Օմէրը, հազրէթը Օսմանը և այլն... Ներկայումս ինչ կարիք կայ ուրեմն, որ մեր մէջ անհամաձայնութիւններ [illegible] բաժանման վտանգին ենթարկվենք: Յոյս ունեմ, որ մեր մէջ ծագած մի քանի թիւրիմացութիւնները ջնջվելով բոլոր մահմեդականները կը հետևեն իսլամութեան մեծերի օրինակին: Ճառախօսը այս մասին Ղուրանից այլ և այլ «հատիս»-ներ առաջ բերելուց յետոյ վերջացնում է խօսքը:

Նախագահը այնուհետև հրաւիրում է քարտուղարին կարդալ ժողովի հետևեալ որոշումները, որոնք ձեռնամբարձ ընդունվում են ներկաներից.

1) Կառավարութեան խոստացած ազատութեան ակնդէտ սպասում ենք և պահանջում ենք, որ այդ ազատութիւնը իսկապէս տան մեզ:

2) Գործադուլի վերաբերմամբ ամեն մարդ ազատ է՝ կուզէ կաշխատէ, կուզէ՝ ոչ. միայն թէ ոչ ոք իրաւունք չունի ուրիշին բռնի ստիպել գործադուլին մասնակցելու. հակառակ դէպքում ամեն կուսակցութիւն պէտք է իր իրաւունքը պաշտպանէ:

3) Մահմեդականների ֆաբրիկներում, գործարաններում, զաւօդներում, պրոմիսլաներում, տպարաններում և այլ այդ կարգի հիմնարկութիւններում աշխատող բանուորները իրաւունք չունեն գործատիրոջ որոշած օրից յետոյ իրանց չաշխատած օրերի վարձքը պահանջելու:

4) Ինչպէս լսել ենք, մի քանի մահմեդական խմբերի և կուսակցութիւնների ներկայացուցիչները գնում են և ռուս բանուորական կուսակցութեան կամ նրա խորհրդին յայտարարում, որ իրանք բոլոր մահմեդականների ներկայացուցիչներն են: Մեր որոշման համաձայն, նրանք կարող են նկատվել միայն իրանց սեփական խմբի ներկայացուցիչ և ոչ երբեք ամբողջ Բագուի մահմեդականների:

Եւ ժողովականներն իրանց վճռին աւելի մեծ կշիռ տալու համար յօժարութիւնն են յանձն առնում մէկիկ մէկիկ ստորագրելու:

Տ. Զաւէն

ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Յունվարի 30-ին Թիֆլիսում կայացաւ պ. Լևոն Ղուլեանի նախագահութեամբ Թիֆլիսաբնակ ղարաբաղցիների ժողովը, որին ներկայ էին մօտ 50 հոգի:

Ժողովի նպատակն էր միջոցներ որոնել օգնելու Ղարաբաղի հայ ժողովրդին, որ Թուրքերի հետ ունեցած վերջին արիւնահեղ ընդհարումների ժամանակ ոչ միայն մեծապէս վնասվել է և բազմաթիւ աղէտների ենթարկվել, այլ և որին շատ տեղերում սով է սպառնում, քանի որ ոչ աշնան է ցանքս եղել, ոչ գարնան կարող է ցանքս լինել։ Հարց յարուցվեց, արդեօ՞ք նպատակայարմար է օգնութեան գործ կազմակերպել մասնաւորապէս ղարաբաղցիների համար, ինչպէս արել են և Թիֆլիսաբնակ ղազախեցիները Ղազախի գաւառի համար, թէ պէտք է ուժ տալ կենտրոնական նպաստամատոյց Յանձնաժողովին և նուէրները յանձնել նրան, որ նա գործադրէ կարօտեալների համար։ Այդ հարցին առարկվեց, թէ որովհետև կարիքը շատ մեծ է և սաստիկ, ուստի աւելի լաւ է, թեթևացնել կենտրոնական յանձնաժողովի գործը, իսկ այդ գործը կը թեթևանայ միայն այն դէպքում, երբ աղէտի ենթարկված ամեն մի գաւառի համար առանձին մտածվի, իսկ այդ կարող են անել այդ գաւառի այն բնակիչները, որոնք զերծ են մնացել աղէտից։

Ժողովը որոշեց, որ Թիֆլիսաբնակ ղարաբաղցիները, թւով մօտ 250 ընտանիք, ամեն ամիս որոշ նպաստ տան յօգուտ Ղարաբաղի կարօտեալների և հանգանակված գումարով հոգացվեն աղէտի ենթարկված ղարաբաղցիների անյետաձգելի կարիքները և այդ նպատակով կազմել մի մասնաժողով, բաղկացած 10 հոգուց՝ Թիֆլիսաբնակ շուշեցիներից, պարտաւորութիւն դնելով այդ մասնաժողովի վրա մօտիկ յարաբերութիւն և կապ ունենալ կենտրոնական յանձնաժողովի հետ։

Ընտրվեցին հետևեալ անձինք, Լ. Ղուլեան, բժ. Աղասարեան, Մ. Դօլուխանեան, Ալ. Մելիք-Ազարեանց, Հ. Առաքելեան, Յ. Խաւնունց, Գ. Մելիք-Կարագեօզեան, Կ. Շահնազարեան, բժ. Գէորգ-Բէկեան և Մ. Աթաբէգեան։

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունվարի 27-ին

Անցեալ դեկտեմբեր ամսին քաղաքումս տեղի ունեցան հատ ու կտոր սպանութիւններ. այս ամսին հազիւ հազ սկսվել էր քաղաքը մի փոքր խաղաղվել, ընդհանուր առևտուրը հետզհետէ սկսել էր մի փոքր կենդանութեան նշոյլներ ցոյց տալ, գիւղերի ճանապարհները նոյնպէս խաղաղվել էին և գիւղացին մի փոքր շունչ քաշած մի կերպ կարողանում էր իր աւելորդ ապրանքը տեղափոխել քաղաք և փոխանակել իր օրվայ անհրաժեշտ կարիքների հետ, երբ չարամիտ մարդիկ սկսեցին գլուխ խփել և ստիպել նրան նորից կղզիանալ ու ոտը կապած հաւի պէս տանը նստել ու իր չոր բաղդը ողբալ։ Ահա մի դէպք, որ մօտ օրերս տեղի ունեցաւ, որի պատճառով գիւղի երթևեկութիւնը մասամբ ընդհատվեց քաղաքի հետ։

Մօլլաբայազետցի (էջմիած. գաւառի) մի հայ վաճառական, տեղական սովորութեան համաձայն, վարձում է Թուրք ուղտապաններ և իր 224 պուդ բամբակները ուղարկում իր մի բարեկամի հետ Երևան, շուկայում վաճառելու համար։ Վերոյիշեալ ուղտապանները հայի հետ անվտանգ անցնում են մի քանի հայ գիւղերով, մինչև անգամ մեկնում գիշերում, բայց երբ անցնում են Թուրքական գիւղերի սահմանը և դեռ չը հասած Մեհմանդաշարլու կոչված զուտ Թուրքաբնակ գիւղը (գիւղը ճանապարհից քիչ հեռու է), այդտեղից փոքր հեռու յարձակվում են դրանց վրա (ուղտապանների ասելով) զինված 15—25 հոգի Թուրքեր և բանտարկելով բոլորին նոյն գիւղի տանուտէրի տանը, բամբակը անհետացնում են։ Երկրորդ օրը ուղտերը և մարդկանց յանձնելով ուղտապաններին՝ արձակում են, իսկ հային տանում են $^1/_2$ վերստ գիւղից հեռու Հրազդան գետի ափը ու սկսում են ամենաանմարդի կերպով նախ ականջները կտրել և ապա երեսի ու գլխի մաշկը քերթել և այսպէս անգթաբար տանջելուց յետոյ սպանում և կտոր կտոր անելով գետն են գցում մարմինը, որը մինչև այսօր չէ գտնված։ Ուղտապանները ազատվելով գնում են Սարդարապատ ու իրանց հասարակութեան տանուտէրին պատմում եղելութիւնը։ Սա յայտնում է եղելութիւնը բամբակի տիրոջը, իսկ վերջինս էլ հեռագրում է գեներալ-նահանգապետին և յայտնում գաւառապետին, որը վերցնելով ստրաժնիկներ՝ իսկոյն գնում է ոճրի տեղը և քննութիւն կատարելով գտնում է ճզմված արիւն, գլխի ոսկրի մի կտոր և ծնօտի կտոր մի մասը, որոնք ծածկված են եղել ձիւնակոյտով։ Խուզարկում են նաև Թուրք տանուտէրի տունը, որտեղ գտնում են մի վերարկու։ Գ. գաւառապետը, որը մի խելօք և հեռատես մարդ է, իսկոյն բանտարկել է տալիս տանուտէրի եղբայրներին և երկու էլ ուրիշ մարդկանց։ Վերջիններս յետոյ խոստովանվում են, որ իրանք են արել։

Ամսի 17-ին տեղիս գեներալ-նահանգապետը այցելում է էջմիածին։ Տեղացիները աղ ու հացով դիմաւորում են վանքի դռանը։ Երբ հարցնում է տեղի տանուտէրից անդորրութեան մասին, վերջինս փոխանակ յայտնելու վերև արձանագրած փաստօրէն դէպքը, ասում է բոլորովին ոչ մի հայ-Թուրքական, այլ մասնաւոր դէպք, որ տեղի է ունեցել Վաղարշապատից Հաջիլար տանող ճանապարհի վրա։ Դէպքը պատահում է այսպէս. սպանված ծերունի Թուրքը Վաղարշապատում մորթի ծախած լինելով՝ վերադառնում է ընկերների հետ իրանց գիւղը, բայց ճանապարհին իբր թէ (ընկերների ասելով) զինված հայեր գալիս սպանում են ու փողը խլում։ Ոմանք էլ ասում են, որ հէնց իրան ընկերներն են սպանել թալանի նպատակով։ Այսպէս անորոշ է մնացել այդ դէպքը, թէև կասկածում էին մի հայի, բայց նա էլ ազատ է։ Ահա մեր աղէտ տանուտէրերից էլ մի նմուշ, որ փոխանակ հայի ջոնքը գրաւելու, աչքն էլ է հանում։

Գ. Աղաղաղեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Յունվարի 22-ին

Չը նայած՝ որ այժմ մի այնպիսի դրութեան մէջ է Անդրկովկասը, որ բացի կեանքի և գոյքի ապահովութիւնից, ուրիշ ամեն բանի մասին մտածելը անժամանակ և անտեղի է համարվում շնորհիւ այն վարակիչ ու միանգամայն աւերիչ ու կործանիչ ախտի, որ արդէն բուն է դրել չար սրտերի մէջ, այնուամենայնիւ մենք մի առանձին ուրախութեամբ պէտք է յիշենք, որ Նուխին այժմ իր բարեկեցութեան այլ պայմանների մասին հոգալու բախտն ունի, կարողանալով միանգամայն զերծ մնալ անցակալի վարակումից։

Այսօր, 22-ին, տեղիս հայ ուսուցչական խումբը երկու սիրողների մասնակցութեամբ մի ներկայացում տուեց մեր երկսեռ դպրոցների օգտին։ Պիեսը «Պարոնեանի» Բաղդասար աղբարն էր։

Ընդհանուր կերպով առած, ներկայացումը, կարելի է ասել, որ, շատ աջող անցաւ։ Համարեա բոլորը իրանց դերերումն էին, և իւրաքանչիւրը դերակատարներից, կարծես, հէնց այն դերին էր յարմար, որն վերցրած ունէր։

Ուշադրութեան առանձնապէս արժանի էին օր. Ամալիա Մակեդոնեանցը, որ կատարում էր Անուշի դերը, ապա պ. պ. Տէր-Պօղոսեանը և Տէր-Յովսէփեանը, որոնցից առաջինը Բաղդասար աղբօր իսկ միւսը երիտասարդ Ռուբէնի դերակատարն էր։ Պակաս չը խաղացին նաև օր. Նասիբեանցը աղախնու և պ. Միքայէլեանը դատաւոր Թորոս էֆենդու դերում։ Մի պակասութիւն միայն՝ որ պարզ նկատելի էր, այդ մուտքերի բացարձակ շփոթութիւնն էր։ Այսպէս, օրինակ, դատաւորները փոխանակ փողոց գնալու, մտնում էին տուն. Անուշի ննջարանը, կամ փոխանակ փողոցից սենեակ մտնելու, խոհանոցից էին մտնում։

Ներկայացումից յետոյ տեղի ունեցան մի քանի հատ կենդանի պատկերներ, որոնցից տպաւորիչ և յաջող էին «Ճախարակ մանող այրի հայ գեղջկուհին» և «Պարզիր աղբիւրը». իսկ Միացածները և Մակովսկու պատկերը, որ ներկայացնում է մոր հանդիպումը իր արհեստաւորի աշակերտ որդու հետ՝ կորցրին էֆֆեկտը։

Մի բան միայն՝ որ զարմանք էր պատճառում, այդ հանդիսականների չափազանց սակաւութիւնն էր։ Զարմանալի է, որովհետև անցեալ սեպտեմբերից մինչև այսօր այս առաջին ներկայացումն է, որ տեղի ունեցաւ, այն էլ ամբողջ 10 տարի փակ և նորէն բաց ուսումնարանների օգտին և նրանց մասնաղ ուսուցիչների նախաձեռնութեամբ։

Սակայն հասարակութեան վրէն մեղադրանք այնքան էլ բարդելու չէ, քանի որ պիեսը քիչ անմատչելի էր, արևմտեան բարբառով գրված լինելու պատճառով. այդ բանին կարող է իբրև ապացոյց ծառայել այն հանգամանքը, որ չը նայած դերակատարների աւելի քան աջող ներկայացնելուն, հասարակութիւնը շատ տեղերում, որտեղ բուռն ծիծաղ էր սպասվում, մնում էր անտարբեր։

Յուսամ ենք՝ որ Նուխու հասարակութիւնը այսուհետև չի զլանայ հանդիսատես լինելու ներկայացումներին, մանաւանդ, երբ նրանք տրվում են ի նպաստ մի բարի նպատակի իրագործման։ Իսկ յարգոյ դերակատարներից կը խնդրէինք պիեսների ընտրութեանն այսուհետև աւելի լուրջ վերաբերվել։

Օրիորդ N.

ԴԱՐՁԵԱԼ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

(Իմ պատասխանը պ. Խաժակին)

IX

Վերջին յօդուածում (№ 23) տուինք տեսական լուսաբանութիւն մեր առաջադրած թեզիսի—դեմօկրատիզմ եւ բիւրօկրատիզմ, բիւրօկրատիզմ եւ դեմօկրատիզմ—դրանք միմեանց հետ հաշտվել ու համակերպվել չեն կարող։

Մենք շեշտեցինք այնուհետև, յօդուածի վերջում, որ պ. Խաժակը պարլամենտ և պարլամենտարիզմ, պարլամենտական և պարլամենտարիստական գաղափարները միմեանց հետ շփոթում է, մինչդեռ դրանք տարբեր և հակադիր տիպի դրութիւններ են, իրականացած այսօրվայ Եւրոպայում։

Ինչպէս որ աբսօլիւտիստական և կէս-աբսօլիւտիստական-սահմանադրական երկրներում իշխում է բիւրօկրատական սիստեմ, այնպէս էլ դեմօկրատական երկրներում տիրապետում է պարլամենտարիստական սիստեմ, ergo այնտեղ, ուր պետութիւնը իրապէս դեմօկրատական-պարլամենտարիստական է, այնտեղ չի կարող խօսք լինել բիւրօկրատիզմի մասին իր աբսօլիւտիստական իմաստով, կլասիկ [illegible]։

Խնդրում ենք ընթերցողին լաւ յիշել այս տողերը մեր փաստական բացատրութիւնների ժամանակ։

Այսօրվայ Եւրոպայում բոլոր իրաւական պետութիւնները (նշանակում է Ռուսաստանի մասին խօսք լինել չի կարող) ըստ իրանց օրէնսդրական սիստեմի բաժանվում են երկու հակառակ տիպերի—պարլամենտարիստական եւ դուալիստական։

Պ. Խաժակը ուզում է մեզ ուսուցանել, որ պարլամենտարիզմը վերաբերում է օրէնսդրական մարմնին (միայն), որ կայ և գործադիր իշխանութիւն, որի նկատմամբ պարլամենտարիզմը անզօր է։

Պ. Խաժակը դատում է, ինչպէս լատինացիք ասում են՝ ad bene placitum—ըստ հաճոյքի։

Կամ նա ծանօթ չէ այն բանին, որի մասին գրում, ճառում է, կամ թէ չէ ըստ իր հաճոյքի ծռմռում է փաստերը աջ ու ձախ, նայած րօպէին և նպատակայարմարութեան—երկուսից մէկը։ Նա դատում է ըստ Մօնտեսքիեօյի վաղուց հնացած և չեղչակոյտ նետած պետական ուսմունքի, որով նա տալիս է օրէնսդրական, գործադիր կամ վարչական և դատարանական բարձր մարմինների հաւասարակշռութեան թէօրիան. դրանցից իւրաքանչիւրը, ըստ Մօնտեսքիեօյի, պէտք է ինքնանկախ գործէ իր սեփական սահմանում։

Պետական նորագոյն գիտութիւնը, որ այնքան ներկայացուցիչներ ունի Գերմանիայում, հիմնապէս հերքելով այդ անարժէք թէօրիան, ապացուցել է իբրև վերջին խօսք, գործադիր իշխանութեան ստորադասութեան անհրաժեշտութիւնը օրէնսդրական մարմնից (подзаконность)։

Եւ այդ երևոյթը ոչ մի իրաւական պետութեան մէջ չէ իրականացել այնպիսի ճշտութեամբ, ինչպէս պարլամենտարիստական տիպին պատկանող երկրներում—օրինակ Անգլիայում, Ֆրանսիայում—ուր օրէնսդրական բարձր ինստանցիան (պարլամենտը) ոչ թէ «լիազօր» չէ, պ. Խաժակ, այլ կատարելապէս եւ անսահման իշխում է գործադիր իշխանութեան վրա, իր օրինական նորմաներով որոշում, և կարգադրում է ի լրումն բոլոր քաղաքական ակտերի։

Մինչդեռ դուալիստական կաթեգօրիային պատկանող երկրներում, որոնց տիպիք ներկայացուցիչները կազմում են Գերմանիան և Աւստրիան, ամբողջ պետութեան մեխանիզմը բաժանված է երկուութեան։ Այդ կարգի երկրներում գործադիր իշխանութիւնը աւելի քիչ է ստորադրված օրէնսդրական մարմնին, որովհետև սահմանադրութիւնը «կիսատ-պռատ» է, իրաւաբանական հիմքերը աւելին չեն պահանջում։ Իսկ քաղաքական զանազան ակտերի կատարածման ժամանակ Վիլհելմ-Բիւլովեան դիւանագիտական կաբինետի համար բոլորովին գոյութիւն չունի ժողովրդական ներկայացուցչութիւնը (րայխստագը)։

Պարլամենտարիստական երկրներում պետութեան բոլոր ֆունկցիաների ամենաբարձր շէֆերը՝ մինիստրները ոչ միայն անմիջապէս պատասխանատու են պարլամենտի՝ ժողովրդի ընտրեալների առաջ, իրանց սահմանում կատարված բոլոր գործերի համար, այլ և նրանց ընտրութիւնը ու պաշտօնանկ անելը կազմում են կուսակցական մրցութեան ու պայքարի առարկայ պարլամենտի մէջ։ Իսկական քաղաքական կեանքը, կուսակցական-դասակարգային կռիւն ու մրցութիւնը տիրում է միայն պարլամենտարիստական երկրներում։

Իսկ դուալիստական երկրներում—օրինակ, պ. Խաժակի օրհնած ֆեդերատիւ Գերմանիայում, ոչ միայն մինիստրները՝ ֆօն ու գրաֆ յունկերները նշանակվում են տոհմային միապետից, այլև նրանք չունեն փաստապէս ոչ մի պատասխանատուութիւն պարլամենտի առաջ. նրանք պատասխանատու են միայն ու բացառապէս միապետի առաջ։ Այդպիսի երկրներում մինիստրական կաբինետը դուրս է գտնվում կուսակցական կռւից ու մրցութիւնից. այնպէս որ մինիստրական կազմի և պարլամենտի միջև անդունդ անջրպետ է գտնվում։

Պարլամենտարիստական և դուալիստական սահմանադրական պետութիւնների խոշոր տարբերութիւնը գեղեցիկ բնորոշել է ինքը՝ ամենամեծ ու օրիգինալ յունկեր-բիւրօկրատը—երկաթէ կանցլեր Բիսմարկը, երբ նա պատասխանել է իր մի ճառով պրուսական պարլամենտի ուղղած մի ուղերձին. «Դուք—ասել է նա պատգամաւորներին—բոլորովին սխալ կերպով էք բաժանել մինիստրներին միապետական գահից։ Պրուսիայում մինիստրական կաբինետը այլ վիճակի մէջ է գտնվում, քան Անգլիայում, ուր կաբինետը կազմվելով պարլամենտի անդամների մեծամասնութիւնից, ունի պարլամենտարիստական բնաւորութիւն։ Պրուսական կաբինետը կառավարական է և ոչ պարլամենտարիստական։ Պրուսական մինիստրները նշանակվելով և փոփոխվելով թագաւորի բարեհաճութեամբ, գործում են նրա անունից և նորին Մեծութեան հրամանով, և անմիջապէս կախված են նրա ուժից ու ցանկութիւնից։ Մենք թագաւորի ծառաներն ենք եւ ոչ թէ ձեր»։

Իսկ պարլամենտարիստական երկրներում, օրինակ, Անգլիայում, Սօլսբերին և Գլադստոնը, իսկ Ֆրանսիայում՝ Վալդէկ-Ռուսսօն և Կօմբը նոյն իրաւաբանական հիմքերով և քաղաքական արիութեամբ կարող էին ասել պարլամենտի անդամներին՝ «Մենք ձեր ծառաներն ենք եւ ոչ թէ թագաւորի կամ հանրապետութեան նախագահի։»

X

Այս բացատրութիւնները կարևոր էին մեզ համար, շատ կարևոր, և իրաւ ոչ աւելի այն պատճառով, որ ցոյց տայինք պ. Խաժակին, թէ նա չափազանց սխալվում է, երբ պարլամենտ ու պարլամենտարիզմ խառնում ու շփոթում է միմեանց հետ, որքան այն պատճառով, որ պարզէինք, թէ ո՛ր աստիճան խոշոր են այն սկզբունքային և սիստեմային տարբերութիւնները, որոնց հիման վրա իրաւական պետութիւններից ոմանց փաստական գերիշխանը — Շվէյցարիայում, Անգլիայում, Ֆրանսիայում—ինքը ժողովուրդն է, իսկ ոմանց մէջ—Գերմանիայում, Աւստրիայում—իրաւական և փաստական գերիշխանը ինքը՝ von Gottes Gnaden (Աստուծոյ ողորմութեամբ) կարգված տոհմային միապետը։

Իրաւաբանական և քաղաքական այսքան խոշոր տարբերութիւն ունենալուց յետոյ, շարունակում է, այնուամենայնիւ, մեր քննադատը պարլամենտարիստական Ֆրանսիան համարել բիւրօկրատիզմի կլասիք հայրենիք (որովհետև վարչական կենտրոնացում ունի) և դասել նրան միահեծան Ռուսաստանի և կէս-միահեծան Գերմանիայի ու Աւստրիայի շարքը։

Սրանով արդէն մենք յանգում ենք մի այլ վիճաւոր կէտի։

Պ. Խաժակը առանձին ինքնագոհութեամբ շարել է իրար յետևից Բրօքհաուզից քաղած ցիտատները։

Ի զուր նեղութիւն է քաշել պ. Խաժակը։

Երկուսից մէկը. կամ պիտի ընդունենք պ. Խաժակի սխեման և նրա անտրամաբանական պնդումները Ֆրանսիայի վերաբերմամբ և այդպիսով սխալ համարենք բիւրօկրատիայի էութեան մասին մեր ասածը («Մշակ» № 17, խնդրում ենք ընթերցողին յիշել այդ մասը), կամ թէ չէ չեղչակոյտ նետենք նրա ասածները և պինդ կանգնենք մեր ճիշտ տեսակէտի վրա, ոչ թէ նրա համար, որ մերն է, այլ այն պատճառով, որովհետև դա գիտութեան խօսքն է։

Մի վարչական սիստեմ, ինչպիսին բիւրօկրատականն է, որ իր պատմական ծագումով, զարգացումով և ներկայ տիրապետութեամբ զուտ աբսօլիւտիստական-ֆէօդալական բնոյթ ունի, անհնարին է, որ այդ տեսակ վարչական սիստեմին տեղ տանք Ֆրանսիայում, որի վեհապետը, լիազօր գերիշխանը, ինքը ժողովուրդն է։ Պաշտօնեաների մի բանակ, ինչպիսին բիւրօկրատիան է, որ իր կաստայական-հիերարխիայով, հրամայական դերով և տիրական-կամային գործողութիւններով եղել է միշտ և է այժմ միապետական գահի վարձկան պահապաններն ու պաշտպանները, անկարելի է, որ այդ որակի պաշտօնեաներ գտնենք պարլամենտարիստական Ֆրանսիայում, ուր գործադիր իշխանութիւնը կատարելապէս ստորադրված է օրէնսդրական բարձր մարմնին, ուր պաշտօնեաների գերագոյն պետերը՝ մինիստրները, ժողովրդական ներկայացուցչութեան ծառաներն են, պատասխանատու իրանց ստորադրված բոլոր պաշտօնեաների արարքների համար։

Անհեթեթութիւն չէ՞ այս սկզբունքային (մի բան, որ պ. Խաժակի համար գոյութիւն չունի) վիթխարի տարբերութիւնից յետոյ Ֆրանսիայի պաշտօնեաներին դասել ռուսական կաստայական ու բռնակալ չինօվնիկութեան և գերմանական յունկեր-բիւրօկրատիայի հետ մի և նոյն շարքը։ Իշխան Բիւլովը՝ յունկեր-բիւրօկրատիայի գլուխը, խստիւ արգելում է, որ Գերմանիայի որ և է պաշտօնեայ, ամենացածրն իսկ, իր ձայնը տայ սօցիալ-դեմօկրատիայի թեկնածուին րայխստագի ընտրութիւնների ժամանակ։ Հակառակ դէպքում, սպառնում է նա, որ այդպիսի պաշտօնեան կը նկատվի իբրև անհաւատարիմ Նորին Մեծութեան կայսեր և կը հեռացվի պաշտօնից։

Օրինակ՞ն է Բիւլովի այդ և նմանօրինակ հազար ու մի դէպքերը։ Ոչ, դա մի կամայական-հրամայական-բռնակալական քայլ է, բիւրօկրատի յատուկ քայլ, որի սկզբնական աղբիւրն ու հրահանգները ծագում են կամայականութեան-հրամայականութեան-բռնակալութեան ծայրագոյն բարձրութիւնից—Վիլհելմի և իր հաւատարիմ ծառայ Բիւլովի կաբինետից։

Այդ կարգի կամայականութիւն և բռնաբարութիւն ժողովրդի քաղաքացիական իրաւունքների, չի կարող գոյութիւն ունենալ պարլամենտարիստական երկրներում—Ֆրանսիայում, Անգլիայում թէ այլուր։ Այնտեղ պարլամենտը կատարելապէս տիրապետելով գործադիր իշխանութեան, վարչական մեխանիզմի վրա, խստիւ արգելում է, քննութեան առնում և վերացնում ամեն մի օրինազանց քայլ, որ կը նկատվի որ և է մինիստրի կամ նրան ստորադրված պաշտօնեայի կողմից։

Ուրեմն մենք խնդիրը դնում ենք զուտ սկզբունքային հողի վրա և ցոյց տալիս, որ աբսօլիւտիստական-ֆէօդալական բնոյթ ու էութիւն ունեցող բիւրօկրատիան չի կարող տեղ ունենալ մի դեմօկրատական (թէև ոչ բոլորովին)—պարլամենտարիստական հանրապետութեան մէջ, իբրև վարչական տիրապետող սիստեմ. այս լաւ ըմբռնեցէք պ. Խաժակ։

Նոյն միտքը պաշտպանել ենք մենք և «Մուրճի» մէջ։ Եւ մեր այդ խօսքերը վերաբերում են, ինչ ասել կուզի, ներկայ Ֆրանսիային և ոչ թէ մենք «գրչի մի հարուածով ջնջել ենք այն բիւրօկրատիայի գոյութիւնը, որ երեք դար շարունակ ծանրացած է Ֆրանսիայի գլխին»—ինչպէս անտեղի կերպով նկատում է պ. Խաժակը։

Եւ ինչ էք կարծում, ընթերցող, Բրօքհաուզի բառարանը ամենևին հակառակը չէ պնդում։ Ինչպէս շատ տեղեր ցոյց ենք տուել, այնպէս էլ այստեղ, պ. Խաժակը, հակառակ տարրական բարեխղճութեան, բառարանի առած թոյլ ցիտատների վրա կառուցանում է իր չափազանցութիւնների հօյակապ շէնքը և ընթերցողին առաջնորդում ad absurdum (դէպի անհեթեթութիւն)։ «Կառավարութեան ձևերը փոխվում էին—ասում է Բրօքհաուզը Ֆրանսիայի մասին—մի կառավարութիւն յաջորդում էր միւսին, բայց վարչութեան բնաւորութիւնը միշտ մնում էր միևնոյն բիւրօկրատականը, և այդ մինչեւ վերջին ժամանակներս, երբ III հանրապետութեան օրէնսդրութիւնը մի քանի քայլեր արեց ուրիշ ուղղութեամբ» (նօտրգրերը մերն են)։

Ինչպէս տեսնում ենք Բրօքհաուզը այս տողերով պնդում է այն հասարակ մտքի, վրա, որ վարչական սիստեմի բիւրօկրատական բնաւորութիւնը տիրապետել է Ֆրանսիայում մինչեւ III հանրապետութիւնը, այսինքն մինչև երեսուն տարի սրանից առաջ։ Իսկ մեր խօսքը, պ. Խաժակ, վերաբերում է ներկայ Ֆրանսիային, այսինքն երեսուն տարի յետոյ փոփոխութիւններ կրած շրջանին։ Հէնց այդ երեսուն տարվայ ընթացքումն է, որ Ֆրանսիայում այն աստիճան ուժեղացել է դեմօկրատիան՝ յանձինս հանրապետականների, մանաւանդ ձախակողմեան բանակի, ընդհանրապէս, և սօցիալիստական կուսակցութեան՝ մասնաւորապէս և այդ բոլորը միապետականների, կղերականների և նացիօնալիստների նուաստման, յետ նահանջման գնով։

Մի երկիր, ուր ներքին եւ արտաքին ամբողջ քաղաքականութիւնը վերապահված է ժողովրդական ներկայացուցչութեան և ուր այդ ամբողջ քաղաքականութեան տոն է տալիս սօցիալիստների պարագլուխը՝ Ժան Ժօրէսը,—նոյն իսկ այնպիսի օրգանի խոստովանութեամբ, ինչպէս «Figaro»-ն է—մի այդօրինակ երկրի վարչական սիստեմը նոյնը (բիւրօկրատական) համարել, ինչպիսին ունեն միահեծան—բռնակալական Ռուսաստանը—ուր օրէնք և իրաւունք փաստապէս գոյութիւն չունեն—և կէս միահեծան Գերմանիան՝ ուր ներքին թէ արտաքին քաղաքականութիւնը փաստապէս վարում է Վիլհէլմ-Բիւլովեան դիպլօմատական գաղտնի կաբինէտը,—այդ տեսակ բռնազբօսիկ համեմատութեան համար է, որ մենք ծայրահեղ անհեթեթութիւն ենք համարում պ. Խաժակի ասածները Ֆրանսիայի վերաբերմամբ։

Դուք կարող էք բևեռել, յարաբերական հասկացողութեամբ Ֆրանսիայի պաշտօնեաներին աւելի բիւրօկրատ համարել, քան Շվէյցարիայի, Անգլիայի և Միացեալ-Նահանգների պաշտօնեաները՝ դա բոլորովին այլ խնդիր է. ճիշտ այնպէս, ինչպէս Գերմանիայի և Աւստրիայի բիւրօկրատիան համեմատաբար աւելի մեղմ է և սահմանափակված իրաւական նորմաներով, քան Ռուսաստանի սանձարձակ բիւրօկրատիան։ Սակայն սա հասկացողութիւնների բևեռել չափն է։ Սկզբունքով Ֆրանսիայի, Շվէյցարիայի, Անգլիայի և Միացեալ-Նահանգների վարչական սիստեմները դասված են մի և նոյն կաթեգօրիայի մէջ, իսկ Ռուսաստանի, Գերմանիայի և Աւստրիայի վարչական սիստեմները մի այլ կաթեգօրիայի մէջ։

Պ. Խաժակը չի տարբերում տիրապետող սիստեմը, ընդհանրացած երևոյթը մասնաւոր երևոյթից ու պատահական դէպքից։ Դրա պատճառն այն է, որ նա մտածում է մետաֆիզիքական մեթոդով, փոխանակ ռեալիստական-դիալեկտիկական մեթոդով մտածելու և դատում բացարձակութեան սկզբունքով, փոխանակ ռելատիվիզմի, յարաբերականութեան սկզբունքով դատելու։

Եթէ, օրինակ, ասում ենք՝ կօզակային-ոստիկանական Ռուսաստան, ոստիկանական պետութիւն (Polizeistaat) Պրուսիա և այդպիսով մատնանիշ անում այդ երկրներում տիրապետող սիստեմների վրա, ապա դրանով ամենևին չենք ժխտում կամ ուրանում, որ Շվէյցարիայում և Անգլիայում (Եւրոպայի ամենադեմօկրատական երկրներում) ոստիկան կամ ոստիկանութիւն կայ։ Եթէ ասում ենք պարլամենտարիստական Ֆրանսիա և Անգլիա, ապա, կրկնում ենք, դրանով չենք ուրանում երբեք, որ Գերմանիայում և Աւստրիայում պարլամենտ կայ։ Ճիշտ այդպէս է և բիւրօկրատիայի խնդիրը։ Եթէ ասում ենք բիւրօկրատական Ռուսաստան, Գերմանիա և այդպիսով մատնացոյց անում այդ երկրներում տիրապետող վարչական սիստեմների վրա, ապա մենք դրանով չենք ժխտում, որ Ֆրանսիայում ըստ ամենայնի վերացել է բուրբօնեան և բօնապարտեան բիւրօկրատիայի հետքերը, տրադիցիաները։ Ընդամենը 3—4 տարի առաջ Ֆրանսիան համարվում էր ամենաթունդ կղերական երկիրը, «կաթոլիկ երկրների թագուհին»։ Սակայն երբ Կօմբի մինիստրութեան օրով եկեղեցին բաժանվեց պետութիւնից, փակվեցին կոնգրեգացիաները, դուրս քշվեցին եզուիտները, այդ օրվանից սկսած անկարելի է Ֆրանսիային կղերական անունը տալ—իբրև տիրապետող սիստեմ պետական մարմնի մէջ, նրա հովանաւորութեան տակ։ Բայց դրանով դեռ չի ասվում, որ Ֆրանսիայի ամբողջ ազգաբնակութիւնը հակակղերական է դարձել մի քանի տարվայ ընթացքում։

Այսպէս պ. Խաժակը միշտ մոռանում է բաղդատական մօմենտը, տիրապետող սիստեմի արժէքը։

Բ. Իշխանեան

(Կը շարունակվի)

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Գորիս 1 փետր. 4 ժամ 20 ր.

Գնդապետ Վերէն ռմբակոծեց հայկական Տեղ և Խնածախ գիւղերը, որոնց բնակիչները մերժեցին տալ զէնքեր և կողոպտված իրեր, առարկելով որ չունեն։

Տեղ գիւղում հինգ ռումբով աւերված է երեք տուն, եկեղեցու հիմքը և դուռը։

Խնածախում հինգ ռումբով աւերված է մի տուն։

Կալանաւորված են Տեղ գիւղի 6 բնակիչ և բերված Գորիս։

Իսկ Թուրքերը, որոնք օգոստոսին աւերել էին Մինքեանդ և Ալիկուլիքենդ գիւղերը, դեռ չեն ենթարկված պատժի։

Ներսէս վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի մէջ Թուրք-հայկական ընդհարման դառն հետևանքները տնտեսական տեսակէտից օրըստօրէ շատ զգալի են դառնում տեղիս՝ մանաւանդ այն Թուրք վաճառականների համար, որոնք խոշոր առևտուր ունէին քաղաքումս։ Ընդհարումը սկսվելու օրերից՝ Պարոն-Բէգօվի քարվանսարայի խալի-խալիչայի և խուրդավար ծախող Թուրք յայտնի վաճառականները, որոնք հարիւր հազարների գործ էին տեսնում, դատարկեցին իրանց խանութները։ Նոյնպէս Հայոց բազարի և Սիոնի փողոցի Թուրք վաճառականները հեռացան այդ մասից։ Հայերի կողմից, բացի Թուրքերի թաղում եղողներից՝ խոշոր վաճառականներ, ինչպէս Վ. Եղիազարօվ, Ի. Առաքելօվ (երկաթավաճառներ), Գուլազօվ (մանուֆակտուր.) և այլն՝ որոնք ալիբրի Մէյդանում՝ Թուրքաց թաղի սահմանում առևտուր ունէին, նոյնպէս տեղափոխեցին իրանց խանութները և հեռացան տիրող անհաշտ դրութիւնից ստիպված։ Այժմ, երբ բորբոքված կրքերը հետզհետէ հանդչում են, երբ արհեստական կերպով սարքած եղբայրասպան «վիշապի» գլուխը երկու կողմի համար՝ մանաւանդ Թուրքաց խաւար ամբոխի համար՝ հետզհետէ աչքառու է դառնում, այժմ տնտեսական ուժգին հարուածն էլ մի կողմից է իր ցնցեցուցիչ և ճնշող ազդեցութիւնը երևան հանում և այդ սարքովի թշնամական յարաբերութիւններին և դրա հետ կապված տնտեսական թշուառութիւններին վերջ դնել են հրամայում։ Ցանկալի, որ գիտակցութիւնը և հեռատեսութիւնն օր առաջ առաջնորդ հանդիսանան մեր Թուրք հարևանների մէջ և միջոց տան նրանց՝ հալածելու իրանց մէջ երեւող «չէյթաններին», որոնք ամենից առաջ իրանց տներն են քանդում։

Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը Թոլմաչեվը սահմանադրական-ռամկավար կուսակցութեան նախագահին թոյլ տուեց նիստ ունենալու, նախապէս ուղարկելով նրան ժողովի ծրագիրը։ Նիստին կարող են ներկայ լինել միայն հրաւիրվածները և մամուլի ներկայացուցիչները։ Փետրվարի 5-ին նշանակված է ընդհանուր ժողովը։

Երէկ դատաստանական պալատում քննվեց «Кавказскій Рабочій Листокъ» և «Елисаветпольскій Вѣстникъ» թերթերի խմբագիրներ Ն. Թամամշեանի և երդուեալ հաւատարմատար Ելիավայի գործը։ Նրանք մեղադրվում էին այդ լրագրերում տպված մի քանի յօդուածների համար։ Դատավարութիւնը դռնփակ էր։ Դատարանը վճռեց իւրաքանչիւրին մի մի տարի բանտարկութեան բերդում։

Թերթերի հաղորդած այն լուրը, թէ Բագու քաղաքը կունենայ Պետական Դումայում երկու ներկայացուցիչ, մէկը՝ մահմեդականներից, իսկ միւսը՝ հայերից, ինչպէս մենք տեղեկացանք հաստատ աղբիւրներից, անհիմն է։ Բագու քաղաքը, ինչպէս և Թիֆլիսը, կունենան մի մի ներկայացուցիչներ։ Յիշեալ քաղաքներում ընտրութիւնները կը կատարվեն ընդհանուր հիմունքներով, առանց անելու այն բացառութիւնները, որոնք տեղի կունենան մեր երկրի ուրիշ մասերում։ Գանձակի և Երևանի նահանգի ընտրութիւնների վերաբերմամբ Կովկասեան Փոխարքային է վերապահված հայերի և Թուրքերի ընտրութիւնները կատարել առանձին առանձին, ի նկատի առնելով այդ նահանգների առանձնայատուկ պայմանները։

Վարդանանց տօնի օրը «Արտիստիկական ընկերութեան» թատրոնում հայ դրամատիկական ընկերութեան խումբը ներկայացնելու է «Շուշանիկ» պատմական ողբերգութիւնը (հեղինակութիւն Կարինեանի), որը ամբողջ քսան տարի է արգելված էր ներկայացնելու և այժմ միայն նորից թոյլատրվում է հայ բեմին։

Գեներալ-նահանգապետը թոյլատրել է բժշկական ընկերութեանը ժողով գումարել փետրվարի 3-ին։

«Իրշադ» թերթին հաղորդում են Գանձակից. «Կազմվում են խուլիգանական խմբեր։ Այդ խմբերը կազմողների թւում կան և ոստիկանական պաշտօնեաներ։ Ամբողջ երկաթուղային կայարանը խուլիգանների ձեռքումն է գտնվում»։

Մայկօպից մեզ գրում են։ Այսօր, կիրակի, յունվարի 22-ին, պատարագից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ Կովկասում վերջին սոսկալի անցքերին զոհ գնացածների համար։ Եկեղեցում դրված էր գեղեցիկ լի պսակներով։ Իսկ հոգեհանգստից յետոյ շքեղ կերպով օրհնվեց տեղիս նորահաստատ ծխական ուսումնարանը. այդ առթիվ տեղի ունեցաւ հանդէս։ Ներկայ էին խուռն բազմութիւն երկու սեռից։ Հանդէսը բացվեց «Մեր Հայրենիք» քայլերգով, որից յետոյ խօսվեցին ճառեր։ Տպաւորութիւնը ոգևորիչ էր։ Դպրոցի հոգաբարձութիւնը հանդէսի հէնց վերջում հեռագրեց Թիֆլիս, Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկին դպրոցի բացման առիթով խնդրելով նրա օրհնութիւնը։ Վերջապէս շնորհակալութեան արժանի են այն ամեն կանայք, որոնք չը գլացան ձրիաբար իրանց աջակցութիւնն ցոյց տալ, սաների համազգեստները շուտափոյթ պատրաստութեան։ Այժմ Մայկօպցիք ինքնավստահ կերպով կարող են առաջ գնալ ազգային զարգացման գործում, միայն թէ աշխատեն գործել ընդհանուր ուժով... Ի սրտէ ցանկանում ենք աջողութիւն»։

«Տֆլ. Լիստկի» լրագրին Պետերբուրգից հեռագրում են. «Եկաւ Քութայիսի նախկին նահանգապետ Ստարօսէլսկին։ Այսօր, յունվարի 31-ին, պատրաստվում է ներկայանալ մինիստրների խորհրդին և բացատրութիւններ տալ իր գործունէութեան վերաբերմամբ»։

Թիֆլիսի դատաստ. պալատում նշանակված է փետրվարի 4-ին, մահափորձի մէջ մեղադրվող Միքայէլ Արամեանցի գործը, պատժագրքի 1455 յօդ. հիման վրա։

Քաղաքում ամեն օր խիստ ու մանրակրկիտ խուզարկութիւններ են տեղի ունենում։ Յունվարի 30-ին խուզարկել են Բօտանիքական այգու մօտ գտնվող Բօլլօվի տունը և նրա շրջակայքը, ենթադրելով, որ այնտեղ զէնքեր կան պահված։ Յունվարի 29-ին, 8-րդ քաղաքամասում Պէսկօվսկի փողոցում բժ. Բօչարեանի տունը, ուր վերևի յարկում խուզարկում էին սպաների ներկայութեամբ, իսկ ներքևի յարկում միայն զինւորները։ Յունվարի 28-ին գիշերը ժամը 2-ին Գօգօլեվսկի փողոցում Մինայեվի տունը, որտեղ բոլոր բնակիչներին ձերբակալել ու զօրանոց են տարել, ու յետոյ պրիստաւի միջոցով արձակել։ Փետրվ. 1-ի լուսաբացին Վերայում խուզարկել են Երիցեանի տունը, Մատինեան փողոցի վրա և այլ ուրիշ տներ։

Յունվարի 31-ին գիշերվայ ժամի $3^1/_2$-ին քաղաքիս 9-րդ մասի Կօչուբէյեվսկի փողոցում կատարվել է հետևեալ ոճրագործութիւնը։ Այդտեղ բնակվող Դիդուրաբեանի տունը մտնում են անյայտ չարագործներ և ծանր ու մահացու վէրքեր հասցնում մարմնի, գլխի, ձեռքի, ոտքի և կողքի մասերին։ Վիրաւորվածը տարվեց Միքայէլեան հիւանդանոցը, իսկ չարագործները առայժմ ձերբակալված չեն և յայտնի չէ, թէ ինչ շարժառիթներից է կատարած այդ եղեռնագործութիւնը։ Վիրաւորված Դիդուրաբեանը քաղաքիս երկրորդ կարգի վաճառական էր, ունէր ձկնեղէնի առևտուր իշխան Վօրօնցօվի արձանի մօտ, Միքայէլեան պրօսպեկտի ծայրամասում և հասակով երիտասարդ էր մօտ 32—35 տարեկան։ Իշխանութեան կարգադրութեամբ նրա կացարանը և խանութը կնքված են և բացված է քննութիւն։

Ռէվէլից յունվարի 18-ին հեռագրում են. «Բերլինէր Տագեբլատ» թերթին. «Երէկ ռուս զինւորները հրացանաձգել արին փողոցում երկու անգլիացի նաւաստիների, որոնք, չը հասկացան զինւորների հրամանը կանգնել, և փախչում էին»։

Վարշավայում մահվան պատժի ենթարկված անիշխանականների թւում գտնվում էին, ի միջի այլոց, 5 հատ անչափահաս պատանիներ։ Մէկը Շապիօ անունով 16 տարեկան գիմնազիստ, իսկ միւս չորսը Բելօստկից էին, ի թիւս որոնց գտնվում էր դարձեալ մի գիմնազիստ Բիվկէնդ ազգանունով։

«Вѣч. Голосъ» թերթին հեռագրում են Կիևից. այստեղ մահվան էր դատապարտված, իբրև թէ իր կալանաւորված ընկերոջը ազատելու փորձ անելու պատճառով, 16 տարեկան մի պատանի Զալիցկի, որի յանցանքը իրապէս կայանում էր հետևեալ բանում. նա բռունցքով սպառնացել էր կալանաւորին ուղեկցող քաղաքապահ ոստիկանին։ Դրա համար նահանգապետը որոշել էր այդ 16 տարեկան պատանուն ենթարկել 3 ամսվայ բանտարկութեան, բայց յետոյ, գանգատվելով նահանգապետի թուլութեան վրա, Զալիցկու վարմունքը դարձրին քաղաքական մի խոշոր գործ և հետևանքը՝ մահվան պատիժ...։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունվարի 31-ին երեկոյեան 7 ժամին Պանասեվիչ փող. անցնող Գէորգ Մինասեվիչ Մանդասարեանի վրա (գանձակեցի), որը բնակվում է նոյն փողոցում, ինչպէս նա յաղորդեց, յարձակվել են 4 անյայտ մարդիկ, որոնցից մէկը խփել է նրան փայտով, իսկ միւսները վայր են գցել հողի վրա և գրպանից հանել են ոսկէ ժամացոյցը, ոսկէ շղթայով։ Չարագործներին ձերբակալելու համար միջոցներ են ձեռք առնված։

Յունվարի 31-ին արագ քշելու պատճառով բռնված է ֆաէտոնչիկ Բէբուրօվը, և հարց ու փորձից որոշված է, որ նա Գանձակի գնդի 5-րդ ռոտայի զինւոր է, 3 շաբաթ առաջ իր կամքով եկել է Թիֆլիս։ Բէբուրօվը ուղարկված է կոմենդանտային վարչութիւնը։

Յունվարի 31-ին Չեմբերեկ (Ղազախի գաւ.) գիւղի բնակիչ Թադէոս Խաչատրեանը յայտնեց X-րդ քաղաքամասի պրիստաւին, որ նրա ապրանքից որը 10 օր առաջ բերել է իր գիւղից և տուել է Սարգիս Աւագեանին պահելու իր պահեստատեղիում, (Թամօժենի փող. տուն Ակօպօվի) գողացված է 22 արկղ թէյ, ծխախոտ և սամովար, ընդամենը 1750 րուբլու արժողութեամբ։ Խաչատրեանը կասկած յայտնեց Ակօպօվի վրա։

9-րդ քաղաքամասի գօրօդօվօյներ Իվան Կօսոյն և Դեմեան Ստեփանօվը յունվարի 31-ին գիշերվայ ժամը

1-ին նկատել են, որ Արտեմ Կիրմիզովի մանրածախի խանութից (Անդրեևսկի փող. № 2) դուրս են ընկել և փախել են դէպի Ալէքսանդր-Նևսկի եկեղեցի 3 մարդ, որոնցից երկուսը անյայտացել են, իսկ մէկը ձերբակալված է. խանութը նայելիս երևաց, որ դուռը կոտրել են, և ինչպէս խանութի տէրը յայտնում է, գողացված է 250 ր. ապրանք։ Ձերբակալվածը Թիֆլիսի բնակիչ Կօնստանտին Մչեդլիձէն է։

—

Յունվարի 31-ին պարսկահպատակ Սեմեօն Ղարաջեանցը յայտնեց, որ յունվարի լոյս 31-ի գիշերը նրա կօշկակարի արհեստանոցից, որը գտնվում է Միքայէլեան փող. վրա, Բարաժովի տանը, կոտրելով կողպէքը, գողացել են 120 րուբլու զանազան կօշկեղէն։ Ոչ ոքի վրա կասկած չի յայտնված։

—

Յունվարի 31-ին գիշերվայ ժամը 11-ին Նասում Ալէքպեր-օղլին 6-րդ քաղաքամասի ոստիկանատուն բերեց 4 տեղից վիրաւորված և արիւնոտ պարսկահպատակ Աղա Բալա մաշադի Աբաս-օղլուն։ Հարց ու փորձի ժամանակ Աղա Բալա մաշադի օղլին բացատրեց, որ նա անցնում էր ս. Սարգսի փողոցով և եկեղեցու դիմաց նրա վրա յարձակվեցին 7 մարդ և բերուտով վիրաւորեցին. նրանք վերարկու և արխալուղ ունէին հագած և խօսում էին հայերէն. վէրքերը թեթև են. վիրաւորվածը ուղարկված է հիւանդանոց։

—

Երէկ փետրվարի 1-ին ցերեկվայ ժամը 11-ին, հայոց կոնսիստորիայում կատարվել է մի յանդուգն գողութիւն, անյայտ մարդիկ գողացել են 6 ծառայողների վերարկուները և մէկի մորթէ գլխարկը։ Յայտնի չէ, թէ ո՞վ է կատարել այդ բանը օրը ցերեկով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԻՈՍ X ՊԱՊԸ, ՍԱՊՊԱՂԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ

I.

1904 թ. յուլիսին Կ. Պօլսում ընտրվեց հայ-կաթօլիկ հասարակութեան կաթողիկոս և պատրիարք՝ Պօղոս արքեպիսկոպոս Սապպաղեան, Եգիպտոսի նախկին առաջնորդը։ Նորընտիր կաթողիկոսը պարտաւոր էր անմիջապէս մեկնել Հռոմ ներկայանալու պապին և կարգադրելու այնտեղ իր հօտին վերաբերեալ մի քանի կարևոր գործեր։ Բայց Թիւրք կառավարութիւնը կասկածելով Սապպաղեանից՝ դժւարութիւններ էր յարուցանում դրա դէմ, որով այս ճանապարհորդութիւնը շարունակ հարկ էր լինում յետաձգել։ Վերջապէս սուլթան Համիդ՝ զիջելով մանաւանդ արտաքին ճնշման, թոյլ է տուել հայ-կաթօլիկ հայրապետին մեկնել Հռոմ և նա անցեալ դեկտեմբերի վերջերը հասել է Հռոմ։ Սապպաղեան սրբազանին Հռոմում շքեղ ընդունելութիւն է եղել։ Ի նկատի ունենալով թէ կաթողիկոսի խօսած ճառի և թէ Պիոս X պապի տուած պատասխանի կարևոր բովանդակութիւնը, հարկաւոր ենք համարում մանրամասնօրէն պատմել այստեղ այդ տեսակցութեան պարագաները։

Սապպաղեան՝ Հռոմ հասնելուն հետևեալ օրը անմիջապէս՝ ընդունվել է պապի կողմից, բայց պարզապէս ծանօթանալու համար և մտերմական հանգամանքով։ Իսկ բուն հանդիսաւոր պաշտօնական ընդունելութիւնը տեղի է ունեցել յունվարի 5-ին։ Այս ընդունելութիւնը առանձին նշանակութիւն է ստանում նրանով, որ կաթողիկոսի հետևորդ եպիսկոպոսների և այլ անձերի շարքում գտնվում էր նաև Աւստրիա-Ունգարիայի հայ-կաթօլիկների թեմական առաջնորդը՝ Լէմբէրգի հայ-կաթօլիկ արքեպիսկոպոս Թէոդորովիչ։ Կաթողիկոսին ի պաշտօնէ ընկերացել է նաև Հռոմի Թիւրքական դեսպանը Գալեան էֆ. աճնամը։ Կաթողիկոսն և իր շքախումբը հանդիսական զգեստներ հագած և իւրաքանչիւրն իր շքանշանները կախած. կառքերով հասել են Վատիկան։ Յատկապէս այս ընդունելութեան հանդէսին ներկայ լինելու համար հրաւիրվել են բոլոր արևելեան ազգերի Հռոմում գտնվող կաթօլիկ եկեղեցական ներկայացուցիչները, ինչպէս՝ բուլղար-կաթօլիկ արքեպիսկոպոս Մլադինով, ասորի, մարոնիտ, մելքիտ և քլդանի կաթօլիկ պատրիարքների տեղական փոխանորդները։ Ներկայ են եղել նոյնպէս կամ իբրև կաթողիկոսի հետևորդ և կամ իբրև յատկապէս հրաւիրեալ՝ այդ միջոցին Հռոմում գտնվող բոլոր հայ-կաթօլիկ հոգևորականները, ի միջի այլոց՝ կաթողիկոսի պաշտօնական ներկայացուցիչը Վատիկանի մօտ՝ Բուլեան արքեպիսկոպոս, Հռոմի Լևոնեան (հայ-կաթօլիկաց) վարժարանի տեսուչ գեր. Քօյունեան, տեսչի օգնականը հ. Յովս. վ. Մօմճեան, և նոյն վարժարանի ուսուցիչ հ. Նազլեան և այլն։ Առանձնապէս հրաւիրեալ էր նաև Վենետիկի Մխիթարեան միաբանութեան աթոռակալը (Աբբահօր փոխանորդը) հայր Մինաս վարդապետ Նուրիխան։

Վատիկանում կաթողիկոսը ընդունվել է քահանայապետի արարողապետ մօնսինեօր Բիզլէրտիից, որ նրան առաջնորդել է պալատի գահական դահլիճը։ 1) Երբ բոլոր հրաւիրեալները իրանց որոշ տեղերը գրաւել են դահլիճում, Պիոս X իր սովորական հետևորդներով մտել է ներս և բազմել է քահանայապետական գահի վրա։ Սապպաղեան դիմել է հռոմէական եկեղեցու գլխին մի պաշտօնական ճառով։ Շեշտելու համար իր հայ լինելը՝ կաթողիկոսը իր պաշտօնական ճառը արտասանել է հայերէն լեզուով, այն էլ գրաբար, որը կաթողիկոսական դիւանապետ Թէրզիպաշեան վարդապետ թարգմանել է լատիներէնի։ Այս ճառում կաթողիկոսը յայտնել է իր խորին շնորհակալութիւնը իրան ցոյց տրված ջերմ ընդունելութեան համար, յայտնել է հայ-կաթօլիկ հասարակութեան հաւատարմութեան մասին, խնդրել է աջակցել հայ-կաթօլիկ եկեղեցու բարեպաշտական և կրթական հաստատութիւններին և հայցել է քահանայապետի օրհնութիւնը թէ իր թէ ժողովրդի վրա։ Կաթօլիկ եկեղեցու պատկառելի պետը այդ ճառին պատասխանել է լատիներէն, որի համառօտ բովանդակութիւնը հետևեալն է։ Ինքը վստահ է թէ հայ-կաթօլիկ ժողովուրդը անկեղծօրէն յարած է Սուրբ Աթոռին և պիտի շարունակէ միշտ այդպէս մնալ, որի համար յայտնում է իր խօսքին շնորհակալութիւնը։ Արևելեան երկրները շատ կարևոր են քրիստոնէական եկեղեցու համար, որովհետև քրիստոնէութիւնը այնտեղ է ծնունդ առած, եկեղեցու սուրբերն այնտեղ են ապրած և Քրիստոսի գերեզմանն էլ այնտեղ է։ Բացատրեցէք այս ձեր հովված ժողովրդին և հրաւիրեցէք նրան ջանալ միշտ աւելացնել եկեղեցու փառքը։ «Իմ նախորդները, շարունակել է նա, անընդհատ հովանաւորել են արևելեան-կաթօլիկ եկեղեցիներին և արգելել են որ արևելեան կաթօլիկները լատինական ծէսին չը յարեն, այլ մնան իրանց արևելեան ծէսում։ Ես ևս այդպէս պիտի պաշտպանեմ արևելեան եկեղեցիները և հոգատանեմ նրանց պայծառութեան, որին պէտք է ձգնեն բոլոր հոգևորականները»։ Պապը իր ճառը վերջացրել է քահանայապետական օրհնութիւնը շնորհելով բոլոր հայ-կաթօլիկ հոգևորականութեան և ժողովրդին։

Պիոս Պապի այս համակրական ճառը շատ լաւ տպաւորութիւն է թողել ոչ միայն հայ-կաթօլիկների այլ ներկայ եղող բոլոր միւս արևելցիների վրա։

Հանդիսաւոր ընդունելութիւնը վերջանալուց յետոյ, կաթողիկոսը իր բոլոր հետևորդներով այցելել է պապի արտաքին գործերի ղեկավար կարդինալ Մէրի-Դէլվալին և նրանից ևս մեծ պատւով է ընդունվել։

Սապպաղեան կաթողիկոս մի քանի կարևոր գործեր ունի կարգադրելիք Հռոմում։ Այս գործերից մէկն էլ Կովկասի հայ-կաթօլիկների եկեղեցական վարչութեան հարցն է, որի լուծումը զանազան աննպաստ պարագաների շնորհիւ դեռ ևս ուշանում է։

Այս առիթով աւելորդ չենք համարում մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ տալ հայ-կաթօլիկ եկեղեցու վարչական կազմակերպութեան մասին։

Հայ կաթօլիկ եկեղեցին Թիւրքիայում ունի 20 թեմ, որոնցից 14-ը ունին իրանց յատուկ եպիսկոպոսները. 5-ը կառավարվում են փոխանորդներով և 1-ը (Զմմարի վանքը) ունի վանահայր։ Կ. Պօլսում կայ 14 եկեղեցի։ Կենտրոնական վարչութիւնը բաղկացած է 2 ժողովներից՝ կենտրոնական և վարչական, որոնց նախագահում է անձամբ կաթողիկոսը։

Հայ-կաթօլիկ 3 վանական միաբանութիւնները՝ 1)Վենետիկի և 2) Վիեննայի Մխիթարեան և 3) Անտոնեան Միաբանութիւնը Կ. Պօլսում վերոյիշեալ հաշուից դուրս են։ Բացի դրանցից կայ և Լէմբէրգի թեմը Աւստրիայում։—Սրանք՝ ինչպէս նաև Ռուսաստանի կաթօլիկ հայոց հոգևոր վարչութիւնը Կ. Պօլսի կաթողիկոսի իրաւասութեան տակ չեն, այլ ենթարկվում են ուղղակի Հռոմի իշխանութեան, պահպանելով անշուշտ որոշ հոգևոր կապ կաթողիկոսական իշխանութեան հետ։

Ա.

---

1) Տես. Վատիկանի դահլիճների մասին տես իմ Թղթակցութիւնը Հռոմից, «Մշակ» 1904, №№ 145, 146, 149։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Պետական խորհուրդը յունվարի իր ընդհանուր ժողովում քննում էր կառավարական հաստատութիւնների և պաշտօնական անձանց գործունէութեան մասին սուտ տեղեկութիւններ տարածելու համար քրէական պատասխանատուութեան ենթարկելու օրէնքների ծրագիրը։ Խորհուրդը ի նկատի առնելով, որ դիտաւորեալ սուտ լուրեր տարածելը, որ նպատակ ունի ազգաբնակութեան մէջ թշնամական յարաբերութիւն գրգռել զօրքի, կառավարական հաստատութիւնների և պաշտօնեաների դէմ, այլ և կառավարական կարգադրութիւնների, հասարակական գործողութիւնների կամ այլ անցքերի մասին սուտ լուրեր տարածելը անպայման անթոյլատրելի են, և պէտք է պատժել, առանց ի նկատի առնելու յանցաւորների կամ չարամիտ նպատակների գործադրելու միջոցները։ Այդ մաքով դիտաւորեալ սուտ լուրեր տարածելու համար որոշված է պատիժ՝ 2—8 ամսվայ բանտարկութիւն կամ դրամական տուգանք մինչև 300 րուբլի։ Եթէ սուտ լուրեր տարածելու հետևանքը լինում է ժողովրդական յուզմունքներ, իշխանութեան դիմադրութիւն կամ կարգապահութեան խախտումը զօրամասերում՝ այդ դէպքում նշանակվում է պատիժ մինչև 1 տարի և 4 ամսվայ բանտարկութեան։ Այդ յանցանքների վերաբերեալ գործերը յանձնվում են քննելու հաշտարար դատաւորներին կամ գաւառական անդամներին։ Հարց բարձրացվեց նոյնպէս պատժական օրէնքներ հաստատել հրապարակային ճառեր արտասանելու, կարդալու կամ յօդուածների ընթերցման համար պատասխանատուութեան ենթարկելու, նոյնպէս և այն տեսակ գրւածքներ, որոնք թշնամութիւն են առաջացնում երկու տարբեր մասերի կամ ազգաբնակութեան դասակարգերի, տէրերի և բանւորների մէջ։ Այդ հարցի առիթով Պետական Խորհրդի անդամների ձայները բաժանվեցին երկու մասի, մի մասը ցանկալի չէր համարում այդ տեսակ օրէնքները, իսկ միւսը՝ անհրաժեշտ էր համարում։

ՊԱՐԻԶ, 30 յունվարի։ Ֆրանս-ռուսական առևտրական դաշնագրի ծրագիրը 407 ձայների մեծամասնութեամբ ընդունվեց ընդդէմ 55-ի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Պետական խորհուրդը յունվարի 30-ի իր նիստում հաւանութիւն տուեց արդարադատութեան մինիստրի առաջարկութիւնը՝ Ստավրօպօլի և Սեւծովեան նահանգներում և Կուբանի շրջանում ներկայ տարվանից հիմնելու դատարաններ երդուեալ անդամների մասնակցութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Պաշտօնական։ Անցած տարվայ վերջերից սկսած երկրի հասարակական կարծիքը գտնվում էր եռման ու տատանման մէջ, նրան հնարաւորութիւն չէին տալիս պարզելու զանազան հասարակական խմբերի փոխադարձ յարաբերութիւնները և նրանց կառավարող քաղաքական հոսանքները։ Կառավարութիւնը, վճիռներ կայացնելիս, չէր կարող հիմնվել նոյնպէս զանազան ժողովներից ու համագումարներից ուղարկվող որոշումների վրա, որոնք, ինչպէս օրինակ Մոսկվայի զեմստվօյի և քաղաքային գործիչների համագումարը, զեմստվօյի ժողովների և քաղաքային դումաների կարծիքով, հանդիսանում էին իբրև արտայայտիչ լոկ անձական կամ կուսակցական հայեացքների, նրանց մասնակցողների կարծիքների։ Ուստի և կառավարութեան համար, անկասկած, մեծ կարևորութիւն ունէր տեղեակ լինել տեղական գործիչների իսկական հայեացքներին, ինչպէս ընդհանուր նշանակութիւն ունեցող հարցերի, նոյնպէս և զանազան տեղերում առանձին միջոցների գործադրութեան վերաբերմամբ։ Այդ տեսակէտից էլ կառավարութիւնը դիմեց նահանգական զեմստվօների ժողովների նախագահներին խնդրելով առաջարկել յիշեալ ժողովներին ընտրել ձայնաւորների միջից մարդիկ, որոնց կարողանար կառավարութիւնը հարկաւոր դէպքում դիմել աջակցելու մի քանի հարցերում, որը միահամուռ ուժերով գիւղին կը լինէր լուծել։ Ստացված պատասխաններից այնուամենայնիւ երևաց, որ մի քանի զեմստվօներ միայն կարողացան կատարել այդ առաջարկութիւնը, հայրենասիրական պարտականութիւն յայտնելով ջերմ մասնակցութիւն ունենալ իրանց ներկայացուցիչների միջոցով մինչև Պետական Դումայի գումարումը հանրօգուտ գործի մէջ, միւսներից մի քանիսը դժւարանում էին իրագործել յիշեալ միջոցը։ Այն ինչ մեծ մասը անկարող եղաւ իրագործել այդ՝ ժողովի ժամանակամիջոցի և առաջարկութեան անժամանակ լինելու պատճառով։ Մինչ այդ հասարակութիւնը ինքը հետզհետէ խաղաղվեց և սկսեց քննողաբար վերաբերվել դէպի ժամանակակից քաղաքական շարժումները, արտայայտելով թէ որքան փափագում է ազգաբնակութիւնը խաղաղութեան ու օրինականութեան վերականգնվելուն ու պատրաստ է աջակցելու կառավարութեանը իրագործել հոկտեմբերի 17-ի շնորհները, որ պետական ու հասարակական կեանքի համար նոր սկզբունքներ են կազմում։ Հարկաւոր է այդպիսով խոստովանել, որ շնորհիւ հասարակական կեանքի մէջ վերջին ժամանակս կատարված փոփոխութեան և նախապատրաստական ընտրողական յաջող գործունէութեան, որով ապահովվում է Պետական Դումայի գումարումը շուտափոյթ կերպով, մինիստրների խորհուրդի նախագահի առաջարկած միջոցը, որ կայանում է զեմստվոյին ժողովների նախագահներին արած դիմումների մէջ, արդէն ներկայումս կորցնում է իր նախկին նշանակութիւնը։

31 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Պաշտօնական։ Համաձայն 1905 թւի դեկտեմբերի 11-ի Բարձրագոյն հրովարտակի 9 պրակի, Պետական Դումայի ընտրողական իրաւունք ունեցողների ցուցակներ դրվում են ի ցոյց այն հաստատութիւնների մէջ, որտեղ կազմվում են այդ ցուցակները, ընտրութիւնները կատարելուց 3 շաբաթ առաջ։ Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգներում և Դոնի զօրաշրջաններում յիշեալ օրէնքի հիման վրա պէտք է ի ցոյց դրվեն քաղաքային ընտրողների 506 ցուցակներ, 506 ցուցակ գաւառական ընտրողներից (հողատէրերի և այն անձանց, որոնք ունեն մասնակցելու նախընտրական ժողովներում) և 20 ցուցակ էլ այն քաղաքների ընտրողներից, որոնք ընտրում են ներկայացուցիչներ Պետական Դումայի համար նահանգներից առանձին (Պետական Դումայի ընտ. կանոն. 6 յօդ.)։ Ներքին գործերի մինիստրութեան մէջ մինչև յունվարի 29-ը ստացված տեղեկութիւններից երևում է, որ արդէն ի ցոյց և դրված մինչև այժմ 66 քաղաքային ցուցակներ, 103 էլ գաւառական ընտրողների ցուցակներ։ Արդէն յայտարարված է որ պէտք էլ մինչև փետրվարի 15-ը ի ցոյց դնեն 107 քաղաքայի ընտրողական ցուցակներ 97 ցուցակ է գաւառական ընտրողների և 1 ցուցակ էլ այն քաղաքներից, որոնք նահանգներից զատ են ընտրում Պետական Դումայի համար։ Այդպիսով մինչև այժմ ունեցած տեղեկութիւններով փետրվարի 15-ին ի ցոյց դրված կը լինին 173 քաղաքային և 200 գաւառական, 1 ցուցակ էլ զատ քաղաքների ընտրողներից։ Առայժմ անյայտ է մնում ժամանակամիջոցը ընտրութեան համար 333 ցուցակ քաղաքային, 306 ցուցակ գաւառական և 19 հատ էլ անմիջական, զատ քաղաքների ընտրողների ցուցակները։ Այդ ցուցակները շուտով կազմելու և յայտարարելու համար ձեռք են առնված միջոցներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Կոմս Իգնատիևի նախագահութեամբ կազմված խորհուրդը ստուկացրած պահպանութեան մասին որոշեց շարունակել պետական պահպանութեան համար օրէնքների մշակումը։ Պետերբուրգում ընդհանուր ընտրողների թիւը (Պետական Դումայի) հասնում է 150,000-ի։ Ընտրողների յայտարարութեան ընդունելութեան ժամանակամիջոցը լրանում է փետրվարի 1-ին։ Ցուցակները պատրաստ կը լինեն մարտի 1-ին։ «Русское Богатство» ամսագիրը դադրեցված է մինչև դատաստանական քննութեան վերջանալը։ Խմբագիրը յայտնի գրող Կորօլէնկօն պատասխանատուութեան է ենթարկվում սոցիալիստական կուսակցութեան յայտնի մանիֆէստը տպագրելու համար։ Մեռաւ կայսերական թատրոնների դերասան Միխայէլով։

ՎԻԼՆԱ, 21 յունվարի։ Երեկոյեան ժամի 8-ին Զավալնի և Դրօկսկի փողոցների անկիւնում ռումբ պայթեց, որից վնասվել են 8 հոգի, ջարդ ու փշուր են եղել շատ պատուհաններ։ Պայթիւնը, ինչպէս երևում է, առաջացաւ պատահաբար։ Վիրաւորված է ռումբ տանողը։

ԼՕՆԴՕՆ 31 յունվարի։ (Րէյտէր) Նոր բանւորական պարլամենտական կուսակցութեան 30 անդամները իրանց պարագլուխ ընտրեցին Հէյէրհարդին և որոշեցին տեղ բռնել դիմադրական կուսակցութեան շարքերում։ 4000 անգործների միտինգում որոշում կայացվեց հաստատուն կերպով առաջարկել կառավարութեանը միջոցներ ձեռք առնել անգործների հարցը շուտով լուծելու։

ՊՕԼՏԱՎԱ, 31 յունվ։ «Պօլտավշչինա» թերթի խմբագիրը և գրող Կօրօլէնկօ դատի են մատնվում, այժմ սպանված, խորհրդական Ֆիլօնովին՝ բաց նամակ ուղղելու համար, որը պարունակում է իր մէջ պաշտօնեաների և զօրքի գործունէութիւնների մասին սուտ տեղեկութիւններ։

ԳՕՄԵԼ, 31 յունվ։ Սավիչը վերջացնելով քննութիւնները, գնաց Պետերբուրգ։ Ասում են, որ ոստիկանապետը դատի է ենթարկվում,

ՎԱՐՇԱՎԱ, 31 յունվ։ Քաղաքում և գաւառներում սկսեցին նախընտրական ժողովները։ Ճառախօսները բացատրում են Դումա հրաւիրելու նպատակները և համոզում են մասնակցել ընտրութիւններին։ Փորձնական ընտրութիւններ են կատարվում։

ՕԴԷՍՍԱ, 31 յունվ, Զօրքերի հրամանատարը յայտարարում է, որ պայթուցիկ նիւթերի ու ռումբերի միջոցով սպանութեան փորձերի մէջ մեղադրվողների գործերը քննվելու են իրանց տեղերում ադմինիստրատիվ կարգով մահվան պատիժ գործադրելով։

ԿԻԷՎ, 31 յունվ։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը գնաց Կօնօտօպ։ Կիէվից ճանապարհվում են դէպի Կովկաս երեք լեռնային թնդանօթաձիգ գումարներ։

1 փետրվարի։

ՎԱՐՇԱՎԱ, 31 յունվարի։ Վօլեա պրուսարձանում չարագործները խուժվելով գարեջրատունը, սկսեցին կրակ բանալ պահակների վրա. սպանված է 1 զինւոր, վիրաւորված են երկուսը և պահապանը։ Երկու չարագործներ բռնված են։ Օխօտա պրուսարձանում զինված չարագործների խումբը գողացաւ գինու պահեստում 400 ր.։ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը հրամայեց այդ փողը ժողովել Օխօտայի բնակիչներից։

ԱՍԽԱԲԱԴ։ Շրջանային սանիտարական յանձնաժողովը փակեց յետագայ ընդունելութիւնը՝ հակաժանտախտային խմբերի մէջ—գթութեան քոյրեր գրվողների համար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 31 յունվարի։ («Ասօս.-Պրէս»)։ Պատգամաւորների պալատի յանձնաժողովը քննում էր՝ օտարերկրայիններին — Ալասկայում ձուկ որսալու արգելման նախագիծը։ Նախագիծը ուղղված է եապօնացիների դէմ։

ԲԵՐԼԻՆ, 31 յունվարի։ Երէկ Եսսենում սկսվեց Պրուսիայի լեռնահանքերի բանւորների պատգամաւորների մեկնումը։ Որոշված է պահանջել կայսերական օրէնքի հրատարակութիւնը լեռնահանքերի արդիւնաբերութեան, լեռնային բանւորների բոլոր անդամակցական և այլ գանձարանների բարեկարգման մասին։

ՏԱՇԿԷՆՏ, 31 յունվարի։ «Рус. Турк.»—լրագրի խմբագիր Մօրօզովը դատապարտված է 1 տարվայ բանտարկութեան բերդում։ Լրագիրը առաջվայ պէս լոյս կը տեսնի։

ԿԱԶԱՆ, 31 յունվարի։ Նահանգական դատարանը փակեց «Էխօ»-ի երեկոյեան հրատարակութեան փակման վճիռը և վերադարձրեց գրաքննիչի գրաւած համարները։

ՊԷԿԻՆ, 31 յունվարի։ (Րէյտէր) Կառավարութիւնը պատուիրեց մահվան պատժի ենթարկել Ջանգպուի միսիոնայի կողոպտող ամբոխի առաջնորդին և միացած չարագործներին խիստ կերպով պատժել։ Անկարգութիւններ յանձնախմբի դէմ ծագեցին չհնազանդելու բռնելիս։ Յանձնախմբի պահպանութեան համար ուղարկած զօրքը կրակ բացեց ամբոխի վրա և սպանեց 12 մարդ։

ԲԷԼԳՐԱԴ, 31 յունվարի։ Վերածնվեց 6 տարի առաջ ընկած ազատամիտ կուսակցութիւնը։

ՄՕՍԿՎԱ, 31 յունվարի։ Երկրորդ կլասիկական գիմնազիայում պայթիւն առաջացաւ, որ սարքել էին աշակերտները գործադուլ առաջացնելու նպատակով, որին մի քանի օր շարունակ հրաւիրում էին թռուցիկներով։ Պայթուցիկ նիւթը դրած էր զգեստ պահելու պահարանի արկղի մէջ և բաղկացած էր նաւթային արկղիկից լցրած վառօդով և հագցրած պատրոյգ։ Առևտրա-արդիւնաբերական կուսակցութիւնը միութեան յանձնաժողով կազմեց՝ որոշելու համար հայեացքների համաձայնութիւն ծրագրի և տակտիկայի բոլոր պրինցիպիական հարցերի մասին։ Հոկտեմբերի 17-ի կուսակցութիւնը իրաւունք ստացաւ համագումար հրաւիրել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի։ Կառավարչական սենատը որոշեց, որ բանւորները զրկվում են վարձ ստանալուց գործադուլների համար, բայց ընդունելութեան պայմանագիրը չէ խափանվում։ Գործարանատէրը իր վնասը պահանջելու չէ բանւորներից, որոնք դուրս են գնացել գործադուլի պատճառով։ Մոսկվայի պահակատեղից դուրս խնայողական գանձարանի բաժանմունքի վրա յարձակում գործեցին 6 ատրճանակներով զինված մարդիկ։ Ընդհարման ժամանակ սպանված է գանձարանի սենեակում գտնվող ոստիկանական վերակացու, վիրաւորված է նրա կինը և հասարակութիւնից 2 հոգի։ Բռնված է յարձակվողներից մէկը, մնացածները փախան չը կարողանալով կողոպտել։ Մեծ իշխանութիւն Ֆինլանդիայի ստատս-սէկրետար օգնական Էրիշտրէմին թոյլատրված է ներկայ լինել սենատում, նշանակվելով գաղտնի խորհրդական։

ՍԱՐԱՏՕՎ, 31 յունվարի։ Գեներալ Սախարօվի սպանման գործը քննվելու է սարատօվեան դատաստանական պալատում—գարնան ուղարկվելիք քննիչ կազմի մէջ։

ԼԷՊՑԻԿ, 31 յունվարի։ Ազգաբնակութեան ազդեցիկ մարդկանցից—ազնուականների գաւառական պարագլուխ նախագահութեամբ կազմված է յանձնաժողով, որի նպատակն է լինելու հակառակ կանգնել յեղափոխական գործունէութեան։ Որոշված է գիւղացիների մէջ տարածել հարկաւոր բրօշիւրներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի։ Իտալական կառավարութիւնը հարց յարուցեց ռուսաց կառավարութեան առաջ՝ վերականգնելու անցեալ տարի ընդհատած բանակցութիւնները նոր առևտրական դաշինք կապելու համար։

ԼՕՆԴՕՆ, 31 յունվարի։ Բալֆուրը ճառ արտասանեց Սիտիում, որի մէջ միտք յայտնեց, թէ արքունական ռէֆօրմը չէ պատկանում այն նախագծերի թւին, որոնց կարելի լինի մոռանալ։ Արքունական բարենորոգման պահանջը չէ պակասում, այլ ընդհակառակը աճում է. Անգլիայի համար ծագում է մի շատ լուրջ հարց այնպիսի դէպքերի մասին, որոնց չէ կարելի արհամարհել։ Եւրոպան ձգտում է այն բանի, որ զրկէ Անգլիային արտաքին հզօրութիւնից։ Մեծ ցեղերը ծախսում են ոչ միայն իրանց դիպլօմատիկական միտքը, այլ և բոլոր զինւորական և ծովային ուժերը առևտուրի ծաղկելու համար։ Կը պատահի, որ մեծ տէրութիւնը իսկ կանի առաջացնել համաշխարհային պատերազմ—իր առևտրական շահերի զարգացման համար։ «Կարծո՞ղ ենք մենք հաւատացած լինել, որ կը հանդիպենք Փոքր-Ասիայում և Պարսկաստանում դէպի մեզ այնպիսի վերաբերմունքի, ինչպիսինով օգտվում են ուրիշ ազգեր։ Եթէ մենք կորցնում ենք Հնդկաստանում կամ Չինաստանում մեծ պետութեան պրէստիժը, բայց չենք կարող նոյնպէս չը պատահել առաջվայ դրութիւնը։ Արտաքին շուկաները այժմ մեզ համար աւելի կարևոր են, քան անցեալ ժամանակներում, երբ նպատակին կարելի էր հասնել բանակցութիւնների միջոցով. բանակցութիւնները նպատակին հասցնել կարող են միայն այն ժամանակ, երբ մեր իշխանութեան տակ կը լինի ոյժ, որ կարող է պաշտպանել մեր պահանջները։»—Վերջում Բալֆուրը ասաց, որ ամենագլխաւոր հարցը կայանում է կառավարչական ձեռնարկութիւնների կրիտիկայի մէջ, գլխաւորապէս այն դէպքում, եթէ բանւորական կուսակցութիւնը մտածէր—համաձայն օրէնսդրական նախագծերի—հետևելու երկրում իր պօլէգների օրինակին։

ԻՐԿՈՒՏՍԿ, 31 յունվարի։ Բայկալի ուղղութեամբ մեկնեցին այստեղից գեներալ Գրօդէկօվը և երկաթուղային գլխաւոր վերատեսուչ Գօրչակովը։

ԵԱՐԵՆՍԿ, 31 յունվարի։ Շրջանային ժողովները կատարել են անհրաժեշտ ընտրութիւնները Պետական Դումայի համար։ Ընտրողական յանձնաժողովը յայտնեց նահանգապետին, որ ընտրողներից մինը գտնվում է քննութեան ներքոյ, բայց նրա վարմունքը նրան իրաւունքից չէ զրկում։

ՍՄՕԼԷՆՍԿ, 31 յունվարի։ Գիւղացիական բանկի բաժանմունքի մէջ, գաւառական զեմստվային հողային յանձնաժողովների անդամների, գաւառական զեմստվօյի ձայնաւորների և ֆինանսական մինիստրութեան ներկայացուցչի մասնակցութեամբ կայացաւ խորհրդակցութիւն՝ զեմստվօյի միջնորդութեան կարգի մասին այն ժամանակ, երբ գիւղացիները կը գնեն հողերը գիւղացիական բանկի օգնութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. [illegible] ներքին և ներարկային
Զ. Ի. ԱԻՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԴԻՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՃԻԵԱՆ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, փետրվարի 4-ին, Հայոց Դրամատիքական ընկերութեան դերասանների խումբը կը ներկայացնէ
I
ՍԻՐԱՀԱՐԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ
Վօդ. 1 գործողութեամբ։
II
ԱԿԱՄԱՅ ԴԵՐԱՍԱՆ
Կոմ. 1 գործ.։
III
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԹՈՐԻԿ
Կոմեդիա 1 գործ. Ա. Յովհաննիսեանի։
Մասնակցում են. տ.տ. Մելիքեան, Փառանձէմ, պ.պ. Պետրոսեան, Յարութիւնեան, Աղայեան, Ազեան, Ուշտոնի և ուրիշներ։
Տեղերի գները 1 րուբլուց մինչև 30 կօպէկ։
Հիւրերը, բացի դրանից, վճարում են մուտքի փող 1 րուբլի։
Սկիզբն է ճիշտ 7½ ժամին երեկոյեան.
Ներկայացման վերջը կը լինի ընտանեկան երեկոյթ մասնակցութեամբ զինւորական երաժշտութեան և սազանդարների։
1—1

Փորձված մի կին
վարժուհի-գիմնազիստուհի ցանկանում է պաշտօն ստանձնել իբրև րէպետիտոր կամ պատրաստել երեխաների ստորին դասատների համար—բնակարանով և ճաշով վարձատրութեամբ։ Համաձայն է մեկնել քաղաքից, բացառապէս ուսումնարանում պարապելու. հասցէն—Հայոց Բարեգործական ընկերութիւն. տեսնել կարելի է ժամի 10—2։
(հ. շ. կ.) 1—3

Ծախվում են
ԿԱՄ
ԿԱՊԱԼՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ
շոգեշարժ փայտ կտրելու սղոցարանի համար բոլոր անհրաժեշտ մեքենաները և պատկանելութիւնը։ Դիմել՝ «եղբ. Ծովեանեանց և ընկ.» առևտրական տան վարչութեան բաժանմունքին (Բեհբութեան փող. № 6)։
1—2

ԼԷՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կօպ.։
Դիմել՝ «Գուտտէմբէրգ» գրախանութը, Թիֆլիս. Նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր։
1—15

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ Ե. ԹՈՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ 1906 Թ.
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1. եր. Օրացոյց—կազմեց Ն. ք. Նիկողոսեան. ընտիր մտքեր. առածներ. հանելուկներ, շուտասելուկներ. II, երես. 1) Ոսկի դարի շուրջը—Սլաքի, 2) Նշմարներ Հայաստանի աշխարհագրութիւնից—Մ. Վ. Քաջբերունու, 3) Օրվայ հարցեր—Բժ. Ա. Բուդաղեանի, 4) Ինչպէս օգնել կարծեցեալ մեռածներին բժշկ. Բ. Նաւասարդեանի, 5) Առողջապահական գիտելիքներ—Դ-ր Բեկլամի, 6) Կինը և տղամարդը—Տիկ. Հրանոյշի, 7) Հրատապ հարցերի շուրջը—պրոֆ. Վ. Զօմբարտի, 8) Քաղաքատնտեսական զրոյցներ—Ե. Թոփչեանի, 9) Ինչպէս են խարդախում մեր սնունդը—Քիմիկոս Կ. Աբովեանի, 10) Ինչպէս են խմորեղէններ պատրաստում—Մօլօխով եղի, 11) Ինչպէս են քաղցր խմիչքներ պատրաստում, 12) Երեխաներին ինչով պէտք է կերակրել—Դոկտ. Կ. Փաշայեանի. 13) Տէրսիմ և տէրսիմցիներ—Անդրանիկի. 14) Եւրոպացիների կարծիքը հայերի մասին—Ե. Թ., 15) Հնկայ կենդանիներ—Վ. Լունկևիչի, 16 Զարմանալի բոյսեր—Ա. Քիշմիշեանի, 17) Կայծակ և ելեկտրականութիւն— Վ. Լունկևիչի, 18) Հողը և նրա տեսակները—Գ. Ղազարեանի, 19) Ինչպէս պէտք է հաւ պահել—Րոմէրի, 20) Հոգեշահ զրոյցներ—Պետրով քահ., 21) Թիւրքահայերի վարչական կազմը, 22) Րաֆֆու յիշատակարանից, 23) Տարօրինակ գիւտեր, 24) Գիտական խաղեր. 25) Թւաբանական խաղեր ու խնդիրներ, 26) Ընտիր հատուածներ, 27) Հայկական պատմ. էջերից, 28) Օգտակար խորհուրդներ, 29) Վանայ երգերից, 30) Զւարճալի հատուածներ, 31) Հետաքրքրական, 32) Ժողովրդական երգերից. 33) Աշուղական հարցումներ, 34) Բանաստեղծական նշմարներ, 35) Նմուշներ Օսմ. բանաստեղծութիւնից, 36) Մեծաղի աշխարհից, 37) Որո՞նք են մարդու 3 պարտականութիւնները, 38) Րաֆֆու գրւածքներից ո՞րն է ամենալաւը, 39) Ի՞նչ է երջանկութիւնը և ինչպէս գտնել նրան, 40) Այլ և այլք։

Տախտակ «Ռուսահայ խմբագիրներ» Առանձին յաւելուած գրքոյկ «Ժողովածու» (1. Արձակ բանաստեղծութիւններ Ա. Ահարոնեանի և Վ. Փափազեանի։ 2. Նմուշներ վրաց գրականութիւնից։ 3. Մրցանակաբաշխութիւն)։ ՄՐՑԱՆԱԿ 50 կտոր գիրք։

Պատի օրացոյցի գինը 50 կօպ.։

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Օրացոյց Հայրապետ. ամեն. հայոց. Ազգային հաստատութիւններ.—Ն. ք. Նիկողոսեանի. Չափեր և նրանց համեմատութիւնը։ Խնայողական գանձարաններ և մարկաներ։ Բանւորների համար։ Իրաւագիտական տեղեկութիւններ։ Մուրհակ, Դրոշմատուրք։ Բնակարանների հարկ։ Պոստ, հեռագիր և հեռախօս։ Երկաթուղի պօստային ճանապարհներ։ Նաւագնացութիւն։ Անցագիր։ Զինւորագրական կանոններ։ Բժշկարան. բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի. Ինչպէս են խարդախում մեր խմիչքները—քիմիկոս Կ. Աբովեանի։ Ջուրը—Դոկտ. Ա. Յակոբեանի։ Կեանք և մահ—Բժ. Ա. Բուդաղեանի։ Գիրք և առողջապահութիւն—Դոկտ. Կ. Փաշայեանի։ Մարդու զգեստը—Դոկտ. Ջեյլերի։ Շաքարը ալքոհոլութեան դէմ—Դոկտ. Գօլովինի։ Ժամանակակից հարցերի Շուրջը. Ի՞նչ է բարեգործութիւնը— պրոֆ. Շմօլլերի։ Ազգայնական հարցի մասին —պրոֆ. Վ. Զօմբարտի։ Մրցման հետևանքը տնտեսական կեանքում—Ֆր. Էնգելսի։ Գիտութիւն և ինքնակրթութիւն—Ե. Թոփչեանի։ Դրամագլուխ կամ կապիտալ—պրոֆ. Կարլչեր։ Ժամանակակից կնոջ վիճակը—տիկ. Հրանոյշի։ Արիութիւն և զանւութիւն—պրոֆ. Մանտեգացցայի։ Ինչ է փողը—Ե. Թոփչեանի։ Գիտական. Օդային ճանապարհորդութիւն—Վ. Լունկևիչի. Արևը։ Բոյսերի կեանքը—պրոֆ. Բօրօդինի։ Երկրագործական խորհուրդներ—Գ. Ղազարեանի, Զուարճալի մաթեմատիկա (պատկերներով)։ Կենսագրութիւններ. Յով. Արքեպ. Արղութեանի, Սունդուկեանի, Պռօշեանի և Շիրվանզադէի։ Օգտակար հասցէներ։ Տնային խորհուրդներ։ Գիտական նորութիւններ։ Օգտակար գիտելիքներ։ Հետաքրքրական։ Յիշատակարան։

Գրպանի օրացոյցի գինը 20 կօպ.։
գումարով գնողներին ձեռնտու զեղչ։
Սեղանի «Լոյս» օրացոյց հանդէսը մեզնից անկախ պատճառով այս տարի լոյս չէ տեսել։ «ԼՈՅՍ» ՀԱՆԴԷՍԸ ԱՄՍԱԳԻՐ դարձնելու համար՝ դիմում է արւած պատշաճաւոր իշխանութեան։
Դիմել՝ Тифлисъ Мадатовская ул. 5. Е. Топчяну. 5—10

Բացւած է 1906 Թ. բաժանորդագրութիւն
ՀԱՍԿԵՐ
Մանկական պատկերազարդ ամսագրի
Ամսագիրը լոյս է տեսնելու Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով

Ամսագրի նպատակն է՝ ա) ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ ձգտումներ, արթարծելով նրանց մէջ սէր դէպի մարդը և դէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ) զարգացնել նրանց ճաշակը և դ) ուրախութիւն եւ աշխոյժ մտցնել մանկական կեանքի մէջ։

Ամսագիրը ունենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ, որ կազմւած կը լինի հետեւեալ մանկավարժական գրքերի, ԳՐԱԴԱՐԱՆԻՑ.

1. Երեխայի կրթութիւնը մինչեւ 6-տարեկան հասակը։ 2. Երկիւղն ու քաջութիւնը սկզբնական կրթութեան մէջ։ 3 Երեխաների բուծը։ 4. Երեխաների հիւանդութիւնները եւ գիւղագրգռութիւնը։ 5. Սովորութիւններ, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը։ 6. Ինչպէս պէտք է ծանօթացնել երեխաներին սեռական կեանքի հետ։

Այս գրադարանի մէջ շօշափւած կը լինեն ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևոր հարցեր։

Բաժանորդագինն է ճանապարհածախսով.

Տարեկան. ՀԱՍԿԵՐ, մանկական բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժնով 4 ռ.
Հին բաժանորդների համար	2 ռ. 75 կ.	3 ռ. 65 կ.
Կէստարեկանը	1 ռ. 50 կ.	2 ռ. —
Մէկ ամսւայ	— 25 կ.	— 35 կ.
Արտասահմանում տարեկան.	ԻՆԸ ֆր.	ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆր.
Հրատարակութեան սկզբից մինչև 1906 թ. վերջը.		5 ռ. —

Խմբագիր—Հրատարակիչ՝ Կաս. Լիսիցեան
Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25. (Тифлисъ Редакція журнала «Аскеръ», կամ (Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».
Թիֆլիսում կարելի է գրվել նաև «Գուտտենբերգ» գրախանութում և «Հերմէս» տպարանում, իսկ Բագւում՝ Сотрудникъ գրախանութում։
Հին բաժանորդներին յունվարի №-ը կուղարկվի ձրի։

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.